Ազգ
Azg
5 ԱՊՐԻԼ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 59(4678)
ISSN: 1829-1651

# Համանախագահները կգան տարածաշրջան

Ամենայն հավանականությամբ, հաջորդ շաբաթ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեն, Բեռնար Ֆասիեն ու Իգոր Պոպովը կայցելեն տարածաշրջան՝ հանդիպումներ ունենալու Երեւանում ու Բաքվում: «Ազերիպրես» գործակալությունը տեղեկացնում է, որ համանախագահները նախ կլինեն Երեւանում, ապա Բաքվում: Ծրագրված է նաեւ այցելություն Լեռնային Ղարաբաղ:

Այս այցելության մասին միջնորդները տեղեկացրել էին դեռեւս մարտի 24-ին հրապարակած հայտարարությամբ, նշելով, թե համանախագահները կրկին տարածաշրջան կայցելեն «մոտ ապագայում շարունակելու քննարկումները հիմնարար սկզբունքների հիման վրա»: Ընդ որում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարության մեջ հատուկ շեշտվում է, որ «բոլոր կողմերի մասնակցությամբ» պետք է միջոցներ մշակվեն հետքննելու հրադադարի խախտումները:

Ա. Հ.

# Հացի, ձվի եւ կաթի գները Հայաստանում եւ ԱՊՀ երկրներում

## *Մեր երկրում դրանք նկատելի ավելի բարձր են եղել*



Վերջերս Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի ղեկավար **Ժան Միշել Հապին**, խոսելով Հայաստանում գնաճի ցուցանիշների մասին, հայտնեց, որ ՀԲ անցկացրած ուսումնասիրության արդյունքներով մի շարք պարենապատեսակներ Հայաստանում ավելի թանկ են, քան ԱՊՀ հարեւան երկրներում: Ըստ ՀԲ ներկայացուցչի, խոսքը հացի, ձվի եւ կաթի մասին էր, որոնց փոխարեն նշվեց նաեւ, որ շաքարավազի գները Հայաստանում ավելի ցածր են:

Դրանից մի քանի օր անց, Լուսակերտի թռչնաֆաբրիկայի ներկայացուցիչ **Մանասե Եփրեմյանը**, փորձելով արդարացնել Հայաստանում ձվի գների պարբերաբար թանկացումը եւ մասնավորապես դրա հավանականությունը նաեւ Զատկի տոնից առաջ, ասաց, որ Հայաստանում ձվի գները ցածր են ինքնարժեքից: Բնական է, որ հարցին, թե դա նշանակո՞ւմ է, որ թռչնաֆաբրիկաները, այդ թվում նաեւ իր ներկայացրած, վնասով են աշխատում, ոչ մի պատասխան չտվեց:

Պարենային առավել մեծ սպառում ունեցող ապրանքների գների ուսումնասիրության արդյունքները մեզ տրամադրելու խնդրանքին ի պատասխան՝ ՀԲ երեւանյան գրասենյակից միայն որոշ տեղեկություններ հաղորդեցին դրանց մասին, որոնք, սակայն, բավարար են իրական վիճակին ծանոթանալու համար:

Համաձայն այդ տեղեկությունների, 2005-2010-ին Հայաստանում կաթի, ձվի եւ հացի (սպիտակ եւ սեւ) միջին գները բարձր են եղել ԱՊՀ երկրներում գրանցված գներից հետեւյալ չափով՝ սպիտակ հացինը՝ 36 տոկոսով, սեւ հացինը՝ 45 տոկոսով, կաթինը՝ 33 տոկոսով, ձվինը՝ 23 տոկոսով: Շաքարավազի գները նշված ժամանակահատվածում Հայաստանում 10 տոկոսով ցածր են եղել ԱՊՀ երկրների գներից: Արեւածաղկի ձեթի, կարագի, տավարի մսի եւ մակարոնեղենի գները նույն մակարդակի վրա են եղել, ինչ ԱՊՀ մյուս երկրներում:

Ընդ որում, հետաքրքրական է, թե ինչպես են փոփոխվել վերոնշյալ գները 2006-2008-ին եւ 2009-2010-ին: Ըստ ՀԲ ուսումնասիրության, 2006-2008-ին բոլոր մթերքների միջին գները Հայաստանում բարձր են եղել ԱՊՀ գներից 21 տոկոսով, իսկ 2009-2010-ին՝ 10 տոկոսով: Նույն համամասնությունն է նաեւ առանձին մթերքների մասով: Սպիտակ հացի գները 2006-2008-ին բարձր են եղել ԱՊՀ գներից 49 տոկոսով, 2009-2010-ին՝ 21 տոկոսով, սեւ հացինը՝ 52 տոկոսով եւ 36 տոկոսով, կաթինը՝ 35 տոկոսով եւ 30 տոկոսով, ձվինը՝ 39 տոկոսով եւ 9 տոկոսով: Շաքարավազի գինը ցածր է եղել ԱՊՀ երկրների գներից նույն 9-10 տոկոսով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑՈՎ

# Նախագահը Սերբիայում է

Երեկ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական երկօրյա այցով մեկնեց Սերբիայի Հանրապետություն: Նախագահը Բելգրադում հանդիպել է իր սերբ գործընկերոջը, որի հետ առանձնազրույցից հետո տեղի է ունեցել հայ-սերբական ընդլայնված կազմով նիստ: Սերժ Սարգսյանին երեկ ընդունել են նաեւ Սերբիայի վարչապետ Միրկո Ցվետկովիչը եւ Ազգային ժողովի նախագահ տիկին Սլավիցա Դուկիչ Դեյանովիչը: Սերբիայի նախագահի հետ հանդիպումից հետո ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ըստ Բելգրադում գտնվող panorama.am-ի թղթակցի, նշել է, որ ԼՂՀ ժողովուրդը ԽՍՀՄ փլուզումից հետո ինքնորոշվել է, պարտադրված պատերազմում պաշտպանել հայրենիքը եւ անհնար է նրան զրկել իր անկախությունից: «Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, որ ԽՍՀՄ փլուզումից ի վեր օգտվել է ինքնորոշման իր իրավունքից, չի կարող ապագա ունենալ Ադրբեջանի կազմում: Նա իրեն պարտադրված դաժան պատերազմի ընթացքում պաշտպանել է իր հայրենիքը եւ անհնար է ստիպել նրան հրաժարվել իր անկախությունից»:

Հայաստանի եւ Սերբիայի նախագահներ Սերժ Սարգսյանի ու Բորիս Տադիչի առանձնազրույցից ու երկու երկրների պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումից հետո Սերբիայի նախագահի նստավայրում տեղի է ունեցել փաստաթղթերի ստորագրման արարողություն. ստորագրվել է երեք փաստաթուղթ: Երկու երկրների նախագահների ներկայությամբ արտգործնախարարներ Վուկ Երեմիչն ու Էդվարդ Նալբանդյանը ստորագրել են համաձայնագիր երկու կառավարությունների միջեւ, որով փոխադարձաբար վերացվում են մուտքի արտոնագրերի պահանջը՝ դիվանագիտական եւ պաշտոնական անձնագրեր կրողների համար: Երկրորդ փաստաթուղթը՝ երկու երկրների միջեւ օդային հաղորդակցությունների մասին, ստորագրել են Սերբիայի ենթակառուցվածքների եւ էներգետիկայի նախարար Միլուտին Մրկոնյիչը եւ Հայաստանի քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ Արտյոմ Մովսեսյանը: Համագործակցության եւս մեկ փաստաթուղթ ստորագրել են մշակույթի նախարարներ Հասմիկ Պողոսյանն ու Սերբիայի տեղեկատվության եւ տեղեկատվական հասարակության նախարար Պրեդրագ Մարկովիչը:

Հ. Ա.

# Արգենտինական գնահատական եւ Հասան Ջեմալի մեկնած ձեռքը

Ապրիլի մեկին Արգենտինայի դաշնային դատախազ Նորբերտո Օժարտիտեն աննախադեպ վճիռ կայացրեց, ըստ որի `«Թուրքիայի կառավարությունը 1915-23-ին ցեղասպանության է ենթարկել հայ ժողովրդին»: Մոտ հարյուր էջից կազմված այս փաստաթղթում մանրամասն ներկայացված են հայկական պահանջատիրության հիմնավորումները, այս ուղղությամբ տարված եւ տարվող լայնածավալ աշխատանքները եւ «Լուիսա Հայրապետյան» ընկերակցության ու արգենտինահայ այլ կազմակերպությունների ներկայացրած փաստերը: Դատական սույն նիստում հայցվոր Կրեկորիո Հայրապետյանի ընտանիքը ավելի քան 120 ամիսների ընթացքում արգենտինական դատարանի կազմին ներկայացրեց Ցեղասպանության վերաբերյալ վկայություններ: Դատարանի վճիռը փաստորեն վերահաստատեց «այս դեպքերի իսկությունը», ավելին՝ հիմնավորեց, որ «պատմական հիշյալ ճշմարտությունը ամրագրված է արդի պետությունների պետական արխիվներում»:

Հետաքրքրական զուգադիպությամբ՝ նույն ապրիլի մեկին Արգենտինայի արդարադատության եւ մարդու իրավունքների նախարար Խուլիո Ալաքը հայազգի Պեդրո Մուրադյանին նշանակել է Արգենտինայի խտրականության դեմ քաղաքականության հետազոտման եւ դաստիարակման նոր համադրող, փոխքարտուղարի մակարդակով: Մուրադյանը այլատյացության եւ ցեղապաշտության դեմ պայքարի մասնագետի համարում ունի: Նախարարը նշանակման առիթով նշել է, որ. «Մուրադյանի նշանակումը այս ոլորտում առիթ կտա արգենտինական օրենքների զարգացմանը»: Իր հերթին՝ Մուրադյանը հայտնել է իր պատրաստակամությունը՝ «շարունակել հանրային քաղաքականությունն ընդդեմ խտրականության եւ վերահաստատել իր ունեցած հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ»:

Հատկանշական է, որ նույն օրերին Լոս Անջելեսում հայ համայնքի կազմակերպած՝ «Դեր Զորից մինչեւ Ծիծեռնակաբերդ» խորագրով կոնֆերանսին մասնակցած հայերի դահիճներից մեկի՝ Ջեմալ փաշայի թոռ Հասան Ջեմալը, դիմելով մասնակից հայերին, ասել է. «Ձեզ Անատոլիայից բարեւներ եմ բերել: Մեր արմատները դեպի նույն հողերն են ձգվում: Ձեր ցավը գիտեմ, կիսում եմ: Ես եկել եմ այստեղ՝ ձեռքս հայ երիտասարդներին մեկնելու: Ցավերն ու տառապանքները իհարկե չեն մոռացվելու, սակայն չենք կարող թույլ տալ, որ դրանք փակեն դեպի հաշտություն տանող ճանապարհը», ասել է Ջեմալ փաշայի թոռը՝ ներկաներին հիշեցնելով, որ ինքը 3 տարի առաջ Երեւանում այցելել է Ծիծեռնակաբերդ եւ մեխակներ դրել հուշահամալիրում:

Հ. Ա.

# Պարբերական նստացույց Ազատության հրապարակում

Ազատության հրապարակում աժմ էլ նստացույց են անում: Մտավորականների մի բավական մեծ խումբ նախապես թեեւ որոշել էր օրը երեք հոգով հացադուլ անել, որպես Րաֆֆի Հովհաննիսյանի հացադուլի շարունակություն, սակայն հետո արդեն վճռել են ամեն օր երեք մտավորականով լռությամբ եւ առանց մեկնաբանություններ տալու ժամը 17-ից մինչեւ օրվա վերջ նստացույց անել: Երեկ նստացույցի էր, օրինակ, ազգագրագետ, հասարակական սեկտորի ներկայացուցիչ Հրանուշ Խառատյանը, ըստ որի ամեն ոք, որ ընդունում է երկրի վիճակի վերաբերյալ մտահոգությունները, կարող է միանալ նստացույցին: Այսօր նստացույց են անելու բնապահպանները, եւ այդպես շարունակ:

Մ. Խ.

# Արաքսի հունը մի քանի հարյուր մետր տեղափոխվել է

ՀՀ կառավարության որոշմամբ Արաքս գետի ձախակողմյան ափի երկայնքով գետավազի արդյունահանումը թույլատրվում է հանքային արդյունաբերություն իրականացնելու իրավունք ունեցող այն կազմակերպություններին, որոնք կապահովեն ափապաշտպան ինժեներական կառույցների պահպանումը, վերականգնումը եւ նորերի կառուցումը՝ բացառելով գետի հունի խախտումը: Բնապահպան **Կարինե Դանիելյանը** «**Ազգ**» օրաթերթի հետ զրույցում ասաց, որ կառավարության որոշումն ուշացած էր, եւ բնապահպանության նախարարությունը պետք է ավելի շուտ արգելեր գետավազի արդյունահանումը:

«Մեզ հասած տեղեկություններով՝ տարիներ շարունակ գետի շրջակայքից ավազ են կրել, ինչից գետի հունը փոխվել է: Ավազի հանումը էկոլոգիական եւ օրենսդրական լուրջ խնդիրներ է առաջացնում: Գետի հունը փոխվել է Հայաստանի կողմը: Անգամ, ինձ հասած տեղեկություններով, Թուրքիան Հայաստանին բողոքի նոտա է ուղարկել, թե ինչու են այդպես վարվում սահմանամերձ գետի հետ: Սակայն, իմ կարծիքով, թուրքերը կարող էին բողոքի նոտա չուղարկել, որովհետեւ հայկական կողմի նման պահվածքից Թուրքիայի տարածքը մեծանում է, Հայաստանինը՝ փոքրանում: Մի քանի տարվա ընթացքում գետի հունը մի քանի հարյուր մետր տեղափոխվել է: Դա կարելի է անվանել ազգային դավաճանություն», ասաց բնապահպանը:

Հ. Հ.

# «Թուրքիան ցանկանում է կարգավորել հարաբերությունները նաեւ հայկական սփյուռքի հետ»

## *Հայտարարել է Դավութօղլուն՝ պատասխանելով CNN-Turk-ի հարցերին*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Մարտի 26-ին Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, մասնակցելով «Անկարայի կուլիսը» ծրագրին, պատասխանել է CNN-Turk-ի հարցերին: Հարցազրույցի բովանդակությունը ապրիլի 3-ին հրապարակեց Նյու Յորքի «Թուրքական» կայքէջը: Դրա գլխավոր թեման հայկական սփյուռքն է, որտեղ արծարծվում են նաեւ հայ-թուրքական հարաբերությունները ու Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրները:

Ըստ կայքէջի, արտգործնախարար Դավութօղլուն հայկական սփյուռքի հետ հարաբերությունները կարգավորելու ցանկություն է հայտնել եւ ասել է, որ Թուրքիան այդ նպատակով ձգտում է շփումների մեջ մտնել սփյուռքի հետ: Նա նշել է. «Ցանկանում ենք կարգավորել մեր հարաբերությունները Հայաստանի ու հայկական սփյուռքի հետ: Դրա համար էլ մենք չպետք է նույն կատեգորիայի մեջ դնենք բոլոր հայերին եւ դիտարկենք նրանց իբրեւ հարցերին միակողմանի մոտեցում ցուցաբերող մեկ ընդհանուր միավոր: Գուցե մեր առջեւ բացվի հաշտեցման ավելի արմատական մի ժամանակահատված»:

Դավութօղլուն այնուհետեւ ասել է, որ հարցն ունի հոգեբանական, իրավագիտական, քաղաքական, պատմական, միջազգային իրավունքի եւ արձանագրության ասպեկտներ, եթե թուրքերն ու հայերը ձգտում են իրական հաշտեցման նոր փուլի սկզբնավորմանը, ապա պարտավոր են հաղթահարել թվարկված արգելքները: Այնուհետեւ նա շարունակել է. «Նրանք շուրջ 10 դար համատեղ են գոյակցել, որը ձգում է մինչեւ Մանազկերտի (1071 թվի) ճակատամարտը: Մինչեւ 20-րդ դարի սկզբները փոխհարաբերությունները եղել են վերին աստիճանի հաշտ ու խաղաղ: Որքան էլ իրավաբանական եւ քաղաքական միջոցառումներ ձեռնարկենք, կարեւորը հոգեբանական արգելքների հաղթահարումն է»:

ԱՄՆ-ի հայ համայնքի հետ հարաբերությունները գնահատելով Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացի շրջանակում կատարված նոր քայլ, Դավութօղլուն ավելացրել է. «Մենք պատրաստ ենք ջանքեր գործադրել հասկանալու համար, թե ինչեր են ապրել հայերը եւ ինչ են զգում, սակայն նրանք էլ պետք է հարգանքով մոտենան մեր հիշողություններին»: Նա միաժամանակ ընդգծել է միակողմանի պատմական հիշողություն ստեղծելու անհնարինությունը եւ հարցին արդար մոտենալու կոչ է արել հայերին: Ըստ նրա այն, ինչ հայերի համար «տեղահանություն» է նշանակում, թուրքերի համար «Դարդանել է եւ Սարիղամիշ», կայսրության անկման փուլում ողբերգությունները յուրահատուկ են եղել բոլոր ռազմաճակատներին, եւ վիշտ են ապրել էթնիկ բոլոր տարրերը, այլ ոչ միայն հայերը:

*Տես էջ 2*

# Գազի բարձր սակագնի հարց չկա, մենք պետք է բարձր աշխատավարձ ստանանք


ՖՈՏՈԼՈՒՐ

Ապրիլի 1-ից գազի սպառողների որոշ շերտերի համար գազն էժանացավ, «Հայռուսգազարդը» գնաց այդ քայլին, բայց գազի սպառման ծավալների, գնագոյացման, գազի որակի բազմաթիվ հարցեր սպառողները հաճախ բարձրացնում եւ պատասխանը չեն ստանում: Ազգային ժողովում մեկը մյուսին հաջորդող խորհրդարանական լսումներից երեկվանը հենց նվիրված էր այդ հարցերի պատասխանը որոնելուն, քննարկվում էր ՀՅԴ օրենսդրական նախաձեռնությունը՝ «ՀՀ գազամատակարարման համակարգի գործունեության ուսումնասիրության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին»: Այս որոշման նախագիծը ավելի վաղ հատուկ կարգով քննարկվել է Ազգային ժողովի քառօրյայում ու հետաձգվել: Ըստ լսումները վարող տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ **Վարդան Այվազյանի**՝ ԱԺ նախագահի առաջարկն էր լսումներ կազմակերպել այդ թեմայով:

Ըստ նախաձեռնության հեղինակների՝ համակարգի մի շարք հարցեր բաց են՝ այդ մասին խոսեցին եւ զեկուցող **Վահան Հովհաննիսյանը**, եւ նրա գործընկերները. մատակարարվող գազի որակի, գազի հաշվիչների ճշգրիտ աշխատանքի, սպառողների սպասարկման, գազի սակագնի արդար եւ ողջամիտ սահմանման եւ համակարգի բազմաթիվ խնդիրների առումով էլ առաջարկի հեղինակները հրամայական են համարում այդ հարցերն ուսումնասիրող խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու խնդիրը: Սպառողների սոցիալական շերտերի համար տանելի գազի գնի վերաբերյալ տարբեր ելույթներին ի պատասխան, թեեւ հենց առաջարկի հեղինակները գիտեին՝ երկիրն իր բնակիչներին պետք է գնողունակ ու վճարունակ դարձնի, մարդիկ պետք է կարողանան վճարել՝ հարցերը այդքան սուր չեն կանգնի: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ **Ռոբերտ Նազարյանի** թվերով՝ 1000 խմ գազի գինը սահմանի վրա 180 դոլար է, 11 դոլար կազմում են կորուստները, 47 դոլար ԱԱՀ-ն, 45 դոլար մարժան (դոլար-դրամ տարբերությունը), գազի սակագինն այսպիսով միջինում 283 դոլար է, վաճառքի գինը սպառողներին՝ 341 դոլար: Բայց թվերը չէին համոզում առաջարկի հեղինակներին, ըստ նրանց՝ քննարկումը ցույց տվեց, որ երկու ծայրագույն թվերը ճշգրիտ չեն, բայց նախ այդ բոլոր թվերը պիտի ուսումնասիրվեն, եւ դա պետք է անի այդ նպատակով ստեղծված ԱԺ հանձնաժողովը, այդպիսով հասարակության հավատը կվերականգնվի:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Նազարյանը, սակայն, իր մասով նպատակահարմար չէր համարում հանձնաժողովի ստեղծումը, քանի որ և՛ էներգետիկայի նախարարությունում, և՛ իր ղեկավարած հանձնաժողովում բոլոր այդ խնդիրներն առանց այդ էլ մանրակրկիտ ուսումնասիրվում եւ իրենց պատասխաններն են ստանում: Ըստ նրա թվերի՝ այժմ գազի սպառողների թիվը 600 հազար է, համակարգում էլ 66 մլրդ դրամի ներդրումներ են կատարվել, իսկ ընդհանրապես՝ եվրոպական երկրներում (Ռուսաստանն ու Ուկրաինան հանած) այդ սակագինն ավելի բարձր է, էներգետիկայի նախարարն էլ նկատեց, թե հարցը պետք է կարգավորվի տնտեսության զարգացմամբ եւ բարձր աշխատավարձերով (հա՞): Իսկ պատգամավորները ցանկության դեպքում այդ նույն կառույցներից իրենց հուզող բոլոր հարցերի պատասխանները կարող են ստանալ: Մի խոսքով՝ երեւի առաջարկը ջրվի, թեեւ Վ. Այվազյանը դեռ խոստացավ քննարկել իր ղեկավարած հանձնաժողովում:

Ս. Խ.

# «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը մատուցում է նաեւ մամոլոգիական ծառայություններ

Անցյալ տարվա դեկտեմբերից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում կրծքագեղձի հիվանդությունների բուժմամբ զբաղվող ծառայություն է բացվել: Հաշվի առնելով, որ կրծքագեղձի հիվանդություններով տառապող կանանց թվի աճ է նկատվում, «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի տնօրեն **Արա Մինասյանը** նման ծառայության բացումը պարզապես անհրաժեշտություն է համարել: Այդ մասին «**Ազգի**» հետ զրույցի ժամանակ նշեց վերոնշյալ բժշկական կենտրոնի թորակալ բաժանմունքի ավագ վիրաբույժ **Արմեն Խանոյանը**, որը նաեւ նույն բաժանմունքում բացված կրծքագեղձի հիվանդությունների ծառայության ղեկավարն է: Արմեն Խանոյանն ասում է, որ նորաբաց ծառայությունը մամոլոգիական բնույթ ունի, այսինքն՝ անմիջականորեն կապված է կրծքագեղձի հիվանդություններին: Հարցին, իսկ կրծքագեղձի խնդիրներով դիմողներն առհասարակ շա՞տ են, բժիշկ Խանոյանը պատասխանում է. «Օրական մոտավորապես 5 հոգի»: Դիմողների մեջ, անշուշտ, լինում են հիվանդներ, որոնք արդեն վիրահատության կարիք են զգում: Վիրահատությունները կատարում է Արմեն Խանոյանը, որը վերապատրաստվել է Մոսկվայի Բլոխինի անվան ուռուցքաբանական ինստիտուտում: Կրծքագեղձի ուռուցքային հիվանդությունների դեպքում, ըստ բժիշկ Խանոյանի, հիվանդների մեծամասնությունն իրենց դիմում է այն ժամանակ, երբ կարիք է զգում արդեն կոմպլեքս բուժման, որի մեջ մտնում են քիմիաթերապիան, ճառագայթումն ու վիրաբուժությունը: Զրուցակիցս նշեց. «Որպեսզի կրծքագեղձի հիվանդությունները վաղ ախտորոշվեն, իսկ բուժումն էլ արդյունավետ լինի, պետք է 35 տարին լրացած յուրաքանչյուր կին պարտադիր պետք է անցնի պրոֆիլակտիկ ստուգում»: Բժիշկը հավելում է, որ կանայք իրենց կյանքի ընթացքում պրոֆիլակտիկ հետազոտման պետք է գնան պարբերաբար:

Կրկին անդրադառնալով նորաբաց ծառայությանը՝ զրուցակիցս ասում է, որ Հայաստանում այն միակը չէ. «Սակայն մինչ սրա բացումը նման ծառայություններ մատուցում էր միայն Ուռուցքաբանության ազգային ինստիտուտը»: Ինչ վերաբերում է համապատասխան սարքավորումներին, զրուցակիցս նշում է, որ դրանք կենտրոնը ձեռք է բերել իր իսկ ֆինանսական միջոցներով: Իսկ վիրահատությունների, առհասարակ, մատուցվող ծառայությունների գներից Արմեն Խանոյանը խուսափեց խոսել:

Հարցազրույցի վերջում բժիշկ Խանոյանը տեղեկացրեց, որ Շվեյցարիայում վերջերս մասնակցել է կրծքագեղձի հիվանդությունների վերաբերյալ գիտական կոնֆերանսի, որտեղ քննարկվել են դրանց վերաբերող խնդիրներն ու աշխարհի առաջատար մասնագետների առաջարկած լուծումները:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Անցկացնել միասեռականների շքերթներ, այցելել զորամասեր, հասնել իշխանափոխության

Ամերիկյան համալսարանի նոր մասնաշենքում թեյի ու բուտերբրոդների սեղանի շուրջը երիտասարդները քննարկում էին երկրում փոփոխություններ իրականացնելու հնարավորություններն ու ուղիները: «Հեղաֆորումի» նպատակն էր մեկ տանիքի տակ հավաքել երիտասարդներին, հասարակական կազմակերպություններին ու լսել նրանց պատասխանները մեկ հարցի վերաբերյալ՝ «Ի՞նչ եմ ուզում փոխել Հայաստանում»:

Դատական համակարգից մինչեւ բանակ, նոր արժեքային համակարգ, մշակութային հեղափոխություն, բացօթյա առեւտուր: Սրանք այն խնդիրներն են, որոնք երիտասարդները համարում են արդիական, եւ միայն այս հարցերում ռադիկալ փոփոխություններից հետո հնարավոր կլինի հասնել հաջողության:

Քաղաքագետ **Թամարա Գեւորգյանի** մեկնաբանությամբ՝ հեղաֆորումը բաց տարածք է ստեղծել՝ երկխոսության եւ կոնկրետ գործողությունների համար:

Նրանք համոզված են, որ երկրում փոփոխությունների հիմքը քաղաքացիական անհնազանդությունն է: Սակայն մինչ վերոնշյալ հարցերի լուծումը անհրաժեշտ է իշխանափոխություն: Ֆորումի մասնակիցները որոշեցին բանակում մոնիտորինգներ անցկացնել, այցելել զորամասեր, հետեւել բանակում մահվան դեպքերի նախաքննություններին ու դատավարություններին:

Մշակութային խմբի անդամները կարեւոր համարեցին կանանց ներգրավվածությունն ու, իրենց խոսքերով, սեռական հեղափոխությունը: Միասեռականների շքերթների անցկացումը նույնպես օրակարգային է:

Հ. Հ.

ԱՐԴԱՐ ԵՎ ՏԵՂԻՆ

# «Տաշիր-2011»-ի մրցանակակիրներին առաջարկվում է նվեր բնակարանները զիջել անօթեւաններին

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյանը ապրիլի 4-ին դիմել է «Տաշիր-2011» մրցանակակիրներին իրենց նվիրված բնակարաններից հրաժարվելու կոչով, որը ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Տաշիր-2011»-ի երաժշտական մրցանակաբաշխությանը բնակարաններ ստացած մեծարգո մրցանակակիր արվեստագետներ.

Հավատացեք, մենք այս կոչը անում ենք ոչ միայն աղետի գոտու երկու տասնամյակ ի վեր խարխուլ եւ խոնավ տնակներում մի կերպ պատսպարված անօթեւան ընտանիքների շահերից ելնելով, այլ նաեւ հանուն ձեր իսկ հեղինակության: Անցած օրը հայ մեծահարուստների կողմից Ձեզ բնակարանների նվիրատվությունը միանշանակ չի ընկալվել, եթե չասենք՝ բուռն վրդովմունք է առաջացրել գյումրեցի հարյուրավոր անօթեւան ընտանիքների մոտ: Գուցե այլ կլիներ հասարակության արձագանքը, եթե դուք իրոք ունենայիք այդ բնակարանների կարիքը:

Ուստի առաջարկում ենք ձեզ ցուցաբերել քաղաքացիական դիրքորոշում եւ հրաժարվել այդ նվիրատվությունից՝ դրանք փոխանցելով անօթեւան ընտանիքներին:

Հավատացեք, բնակարաններից հրաժարվելու պարագայում դուք անհամեմատ ավելին ձեռք կբերեք՝ հասարակության հարգանքի ու վստահության տեսքով: Ձեր այդ քայլը հայ մեծահարուստներին լավ դաս կլինի, որպեսզի նրանք ձեռնպահ մնան անտեղի շռայլություններից եւ անհարկի նվիրատվություններից»:

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

# Համատեղ միջոցառում Եղեռնի 96-րդ տարելիցի կապակցությամբ

**Մեծ եղեռնի 96-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպված միջոցառումների շրջանակներում «Ռանչո Միրաժի հանդուրժողականության կրթական կենտրոնում» ՀԲԸՄ-ի լոսանջելեսյան երիտասարդ արհեստավարժների (ԼԱԵԱ) խումբը, համագործակցելով Ամերիկայի հայկական համագումարի հետ, մարտի 27-ին անցկացրել է բանավեճ-դասախոսություն նվիրված Հայոց ցեղասպանությանը: Երկու ժամ տեւած միջոցառումը, որի ընթացքում ցուցադրվել են նաեւ հատվածներ Կառլա Կարապետյանի «Ճչացողները» ֆիլմից, վարել է ԼԱԵԱ-ի նախագահ Եղիկ Քեշիշյանը: Ելույթներ են ունեցել կրթական կենտրոնի տնօրենների խորհրդից Մելիսա Բենուերը, որը գոհունակություն է հայտնել միջոցառման հաջող անցկացման համար, եւ Հայկական համագումարի հարավային Կալիֆոռնիայի տարածաշրջանի խորհրդի անդամ Մարգարիտ Մղրուբյանը:**

**Ըստ ՀԲԸՄ-ի լրատվական գրասենյակից ստացված հաղորդագրության, միջոցառմանը ներկա է եղել Հայկական համագումարի հոգաբարձուների վարչության անդամ Զոյա Սքայնը:**

Հ. Ծ.

# «Թուրքիան ցանկանում է կարգավորել հարաբերությունները նաեւ հայկական սփյուռքի հետ»

*1-ին էջից*

Վերջում Դավութօղլուն վերստին խոսել է ոչ միայն Հայաստանի, այլեւ հայկական սփյուռքի խելահաս մարդկանց հետ շփումներ հաստատելու Թուրքիայի ձգտումների մասին, եզրակացնելով. «Եթե դա տեղի չունենա, փոխարենը առաջին պլան դուրս գան սփյուռքի այն հատվածները, որոնք օգտվում են ստատուս քվոյի պահպանումից եւ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների սառեցումից, ինչ խոսք, դժվար կլինի հաշտության ապահովումը: Մենք հիմա ամենայն համբերությամբ, առանց զայրանալու, տեր կանգնելով ազգային արժանապատվությանը, նաեւ հարգանք ակնկալելով մեր վշտերի նկատմամբ, առանց հանդուրժելու պատմության մասին տարրական գիտելիքներից զուրկ հանձնաժողովի (ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի) անդամների մոտեցումները, որոնք մի քանի լոբբիների աջակցությունը վայելելու նկատառումով այս կամ այն կերպ են քվեարկում (նկատի ունի ցեղասպանության բանաձեւը), պետք է սպասենք»:

Դավութօղլուի խոսքերից մեկ անգամ եւս ակնհայտ է դառնում, որ Թուրքիայի խնդիրը ոչ այնքան Հայաստանի հետ հաշտությունն է, որքան հաշտեցման պատրաստակամությամբ ցեղասպանության բանաձեւերի չեզոքացումը: Ըստ երեւույթին, հենց այդ նպատակով էլ ստորագրվել էին հայ-թուրքական արձանագրությունները: Քանի որ դրանց վավերացման համար առաջադրված թուրքական նախապայմանները բախվել են ԱՄՆ-ի, Եվրոմիության եւ Ռուսաստանի հակազդեցությանը, ուստի Թուրքիան, այսպես կոչված, Հայաստանի հետ հաշտեցման պատրաստակամությունը համադրում է հայերի նկատմամբ «բարյացակամությամբ», որպեսզի սփյուռքահայության գոնե որոշակի հատվածի դարձնի ցեղասպանության բանաձեւերի չեզոքացման գործիք:

# «Երեւանի զինանշան» հուշամեդալ՝ Ռալֆ Յիրիկյանին

**Երեւան քաղաքին մատուցած ծառայությունների, քաղաքապետարանի հետ սերտ համագործակցության, մայրաքաղաքում անցկացվող տոնակատարությունների կազմակերպմանը ցուցաբերած աջակցության, ինչպես նաեւ հասարակական կյանքում ներդրած զգալի ավանդի համար՝ Երեւանի քաղաքապետի որոշմամբ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը պարգեւատրվել է «Երեւանի զինանշան» հուշամեդալով:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

# Վերջնական նպատակն է՝ սահուն անցում անվտանգ սահմանով

Երեկ ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդը, Եվրոմիությունից ֆինանսավորվող եւ ՄԱԶԾ-ից իրականացվող «Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարում» (ՀԿՍՀԿ) ծրագրի հետ համատեղ, ներկայացրեց ծրագրի նպատակներն ու մինչ օրս ձեռք բերված հաջողությունները: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններ, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, ինչպես նաեւ սահմանային կառավարման ոլորտում իրենց դերակատարությունն ունեցող ՀՀ համապատասխան պետական գերատեսչությունների ղեկավարներ, տարածքային զարգացման ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:




ՀԿՍՀԿ ծրագրի հայաստանյան գրասենյակի ղեկավար **Գրիգորի Մալինցյանը** պատվիրակներին ներկայացրեց ծրագիրը: Ըստ այդմ՝ «Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարում» ամբողջական ծրագրի ընդհանուր բյուջեն, որը տրամադրում է Եվրոմիությունը, կազմում է 6 մլն 315 հազար եվրո: Հայաստանյան ծրագրի բյուջեն կազմում է 1 մլն 402 հազար 784 եվրո: Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանը** հավելեց, որ Հայաստանը ԵՄ-ից ստացել է 6 մլն եվրո եւս, եւ այժմ բանակցություններ են ընթանում եւս 2 մլն եվրո ստանալու կապակցությամբ՝ ծրագիրն ամբողջությամբ իրականացնելու համար: «Այս ապրիլի վերջին արդեն հայտնի կլինի ՀՀ հյուսիսային անցակետերում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար հայտարարված մրցույթի հաղթողի անունը, որին պետք է ընտրել հայտ ներկայացրած հինգ միջազգային կազմակերպություններից, որից հետո՝ արդեն սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նախատեսում ենք սկսել շինարարական աշխատանքները», ասաց Բաղդասարյանը՝ ընդգծելով, որ խնդիրը ՀՀ-ի համար ունի գերակա նշանակություն: «Մենք հույս ունենք, որ Բավրայի, Բագրատաշենի եւ Գոգավանի վերակառուցված, եվրոպական չափանիշներին համապատասխան անցակետերը էականորեն կակտիվացնեն Հայաստանի գործարար միջավայրը՝ կանխելով բոլոր հնարավոր կոռուպցիոն ռիսկերը: Ուզում եմ նաեւ մի ուրախալի տեղեկություն հաղորդել. այս տարի մենք Վրաստանի հետ երկկողմ համապատասխան համաձայնագիր կստորագրենք, որը ոչ միայն երկկողմ, այլեւ տարածաշրջանային համագործակցության փայլուն օրինակ կլինի», նշեց Արթուր Բաղդասարյանը: ԱԱԽ քարտուղարը մեկ «լավ լուր» եւս հաղորդեց. «Այս տարի մենք խոշոր համաձայնագիր կստորագրենք նաեւ ԵՄ-ի Արեւելյան սահմանների կառավարման գործակալության հետ»:

Ներկայացնելով Հայաստանի սահմանային անցակետերում ներկա իրավիճակը եւ դրա բարելավման ուղիները՝ Գրիգորի Մալինցյանը, շեշտելով, որ չնայած ծրագիրը ներառում է ամբողջ Հարավային Կովկասը, սակայն Հայաստանի մասով (հասկանալի պատճառներով) ենթադրում է հիմնականում համագործակցություն Վրաստանի հետ, ասաց. «Այսօրվա դրությամբ ՀՀ-ն ունի 7 գործող պետական սահմանային անցակետեր. Բագրատաշեն, Բավրա, Այրում, Գոգավան (Վրաստանի հետ), Մեղրի (Իրանի հետ) եւ 2 օդային՝ «Զվարթնոց» եւ «Շիրակ» օդանավակայաններ:

*Տես էջ 4*

# ginosi.com-ը՝ Ճապոնիային

www.ginosi.com-ը բարեգործական ծրագիր է իրականացնում՝ ճապոնական մեծ աղետից տուժած բնակչության օգնություն ցուցաբերելու: www.ginosi.com-ը՝ «Հայկական առցանց ամրագրման կազմակերպությունը» աշխատանքներ է իրացնում միջազգային զբոսաշրջության ոլորտում: Կազմակերպության մամլո հաղորդագրությունը տեղեկացնում է, որ մինչեւ ապրիլի 24-ը կատարվող յուրաքանչյուր ամրագրումից ստացված եկամուտներից նվիրաբերելու է 5 դոլար՝ «Heart to Heart International Japan Disaster Relief» հիմնադրամին:

«Մեր ազգի պատմության ընթացքում մենք տեսել ենք մեր բաժին ցավն ու տառապանքը, եւ այդ օրերին բարի մարդկանց օգնության ձեռք մեկնելու կամքը հաճախ է եղել մեր միակ փարոսն ու հույսը ծանր պահերին: Մենք չափազանց լավ գիտենք, թե ինչ է նշանակում դա եւ պատահական չէ, որ բարեգործության վերջնաժամկետը սահմանվել է ապրիլի 24-ը: Մենք գիտենք, որ, ցավոք սրտի, չենք կարող ժամանակի անիվը հետ պտտել, վերադարձնել անցյալը, վերականգնել հազարավոր մարդկանց խաթարված կյանքերը, բայց մենք հույս ունենք, որ դրամական միջոցները կբարձրացնեն այդ մարդկանց տոկունությունը եւ ազդակ կհանդիսանան փրկվածների համար՝ ապրելու եւ հուսալու», ասել է կազմակերպության հիմնադիր տնօրեն **Զիվան Գինոսյանը**:

**Ս. Ք.**

# ՌԴ երիտասարդ ֆիզիկոսների մեջ բարձր վարկանիշ ունի 21-ամյա ֆիզիկոս Հայկ Իշխանյանը

Ռուսաստանում երիտասարդ ֆիզիկոսների մեջ ամենից բարձր վարկանիշ ունեցողների թվում է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտն այս տարի գերազանցությամբ ավարտած 21-ամյա **Հայկ Իշխանյանը**: Նրա անունը «**Ազգն**» առաջին անգամ նշել է ՀՕՖ-ի այս տարվա գիտական դրամաշնորհների արժանացածների թվում, այդ դրամաշնորհները տրվում են ԱՄՆ-ի ազգային գիտական ֆոնդի երաշխավորությամբ՝ ամերիկյան փողեր են: Հայկի դիպլոմային աշխատանքի տակ իր ստորագրությունն է դրել Նոբելյան մրցանակի դափնեկիր Բասովը: Միջազգային ամենահեղինակավոր գիտական ամսագրերում Հայկ Իշխանյանն արդեն հասցրել է 12 գիտական հոդված հրապարակել, մի շարք միջազգային հեղինակավոր մրցույթների մրցանակակիր դառնալ (Մոսկվայի ֆիզիկայի ընկերության մրցանակ, Պավլովի շքանշան եւ այլն): Հայկ Իշխանյանը այս տարվա հուլիսին կպաշտպանի թեկնածուական թեզը. Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում պետական քննական հանձնաժողովը որոշել էր երաշխավորել Հայկին՝ շրջանցելու մագիստրատուրայում ուսանելը եւ միանգամից շարունակել ասպիրանտուրայում: Հայկը երեւի այն հազվագյուտ գիտնականներից կլինի, որ 21 տարեկանում գիտությունների թեկնածու կդառնա: Սա հազվագյուտ բան է: Ի դեպ՝ Հայկ Իշխանյանն արդեն նախագծեր է մտնում, օրինակ, ավարտելուց հետո քիչ ժամանակով Երեւան գալով՝ նա կառավարությանն առաջարկել է «Լաբորատորիա առանց սահմանների» նախագիծը: Այդ նախագծի միտքն այն է , որ աշխարհի տարբեր հայտնի գիտական կառույցներում եւ լաբորատորիաներում աշխատող հայ ֆիզիկոսները հնարավորություն ունենան համատեղ գիտական հետազոտություններ անելու: Առաջին խումբը եւս առաջարկել է (նրանց մեջ են Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի ասպիրանտ Տիգրան Շահվերդյանը, Նյու Յորքի Սան Բրուք համալսարանի երիտասարդ գիտնական Սահակ Պետրոսյանը, երեւանցի երիտասարդ ֆիզիկոս Ռուզան Սոխոյանը): Հետագայում մենք առավել հանգամանորեն կանդրադառնանք երիտասարդ ֆիզիկոսի գործունեությանը, ավելացնենք միայն, որ նա երեւանցի ֆիզիկոս Արթուր Իշխանյանի որդին է:



**Ս. Խ.**

ՇՈՒԿԱ

# Կախված մեթոդաբանությունից՝ գնաճը կարող է լինել բարձր կամ ցածր

### *Ազգային վիճակագրական ծառայության ներկայացուցիչն ու փորձագետը անդրադարձան գնաճի ցուցանիշներին*

**Մարտին փետրվարի համեմատ Հայաստանում նվազել են 3 ապրանքատեսակների գներ՝ մսամթերքինը՝ 0,1 տոկոսով, ձվինը՝ 0,4 տոկոսով եւ մրգինը՝ 2,2 տոկոսով: Այս մասին երեկ հայտնեց ազգային վիճակագրական ծառայության գների վիճակագրության եւ միջազգային համադրումների բաժնի պետ Գուրգեն Մարտիրոսյանը՝ ներկայացնելով առաջին եռամսյակի տվյալները: Նրա ներկայացմամբ, մարտին փետրվարի համեմատ 13 պարենային ապրանքախմբերից 10-ում արձանագրվել է գնաճ՝ 0,1-3,3 տոկոսով: Ամենաբարձր գնաճն արձանագրվել է բանջարեղենի եւ կարտոֆիլի գծով՝ 34,7 տոկոս, շաքարավազի գինը բարձրացել է 6,8 տոկոսով, սուրճ, թեյ , կակաո ապրանքախմբինը՝ 5,4 տոկոսով եւ հացամթերքինը՝ 4,8 տոկոսով:**

**Սակայն մամուլի ասուլիսի մյուս բանախոսի՝ կառավարման փորձագետ Հարություն Մեսրոպյանի կարծիքով, կախված մեթոդաբանությունից, գնաճը կարող է լինել բարձր կամ ցածր: Նա նշեց, որ ներկայումս օգտագործվում է 2005 թվականի այն մեթոդաբանությունը, ըստ որի՝ 470 ապրանքատեսակների մեջ են մտնում նաեւ երկրորդական նշանակության ապրանքներ: Մինչդեռ անապահով խավը գումարը ծախսում է հիմնականում երկու ուղղությամբ՝ սննդամթերք, որոնց գները ավելի արագ են բարձրանում, եւ կոմունալ ծառայություններ: «Եթե վիճակագրական ծառայությունը սպառողական զամբյուղում ներառի անապահով խավի կողմից օգտագործվող ապրանքատեսակները, ապա տեսվում է, որ 2010 թվականի գնաճը 25 տոկոսից բարձր է», եզրակացրեց նա, ավելացնելով, որ 2008 թվականին աղքատության շեմը կազմել է 23 տոկոս, իսկ 2010-ին՝ 34,1 տոկոս: Ինչը նշանակում է, որ մոտ 1,1 մլն մարդ Հայաստանում անապահով խավն է:**

**Հարություն Մեսրոպյանի կարծիքով, քանի որ Հայաստանն առավելապես ներմուծող երկիր է, ապա մեր գների վրա կազդեն նաեւ էներգակիրների եւ սննդամթերքի միջազգային թանկացումները, ինչպես նաեւ եղանակային պայմաններն ու մենաշնորհները: Փորձագետի համոզմամբ՝ անհրաժեշտ է ոչ թե պայքարել մենաշնորհների դեմ, այլ վերացնել այդ երեւույթը՝ ստեղծելով մրցակցային պայմաններ: «Այդ դեպքում որոշ փոփոխություններ կարող են լինել», ասաց նա:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Ռոբերտ Քոչարյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի

**«Օլիգարխները լավ ճանապարհ են գտել հեշտ ապրուստի համար: Աշխատելու կարիք չկա, հիմա նրանք մամուլին դատի են տալիս, գումար շահում: Պատկերացնո՞ւմ եք, եթե տարվա մեջ գոնե երեք թերթի դատի տան ու պահանջեն 6 միլիոն դրամ, էլ աշխատելու կարիք չի լինի», այսպես է մեկնաբանում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ «Հրապարակ» օրաթերթին դատի տալը լրատվամիջոցի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանը: «Ազգ»-ի հետ հեռախոսազրույցում Օհանյանն ասաց, որ երեկ առավոտյան խմբագրությունը ստացել է դատական ծանուցագիր: Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան ներկայացրած հայցը բաղկացած է 3 կետից՝ հերքել թերթի՝ այս տարվա փետրվարի 12-ի համարում հրապարակված «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին բացատրո՞ւմ» խորագրով հոդվածը, որպես փոխհատուցում վճարել 6 մլն դրամ եւ արգելանք դնել թերթի հաշիվների վրա:**

**Մարտի 28-ից թերթը չի կարողանում տնօրինել բանկում գտնվող սեփական հաշիվները: Արմինե Օհանյանն ասաց, որ Քոչարյանը ոչ թե օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետում է հայցը դատարան ներկայացրել, այլ ուշացրել: Սակայն դա խոչընդոտ չի եղել եւ դատարանը թերթի հաշիվների վրա արգելանք է դրել: Առաջիկայում թերթը կշարունակի լույս տեսնել: Մայիսի 10-ին տեղի կունենա գործով նախնական դատական նիստը: Մինչ այդ խմբագրությունը պետք է աշխատանք տանի թերթի հաշիվների վրայից արգելանքը հանելու ուղղությամբ: Այլապես թերթը որոշ ժամանակ անց չի կարողանա լույս տեսնել:**

**«Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին բացատրո՞ւմ» հոդվածը թերթում տպագրվել է Քոչարյանի վերջին հայտարարությունից հետո: Ըստ «Հրապարակ»-ի խմբագրի՝ լրագրողը իր վերաբերմունքն ու գնահատականն է ներկայացրել ՀՀ երկրորդ նախագահի նկատմամբ: «Որեւէ տեղեկատվություն թերթում չկա, որ այն մենք հերքենք»: Արմինե Օհանյանի փոխանցմամբ հոդվածի լույս ընծայումից հետո նրանք Քոչարյանի գրասենյակից ստացել են գրություն, որով պահանջվում է հերքում: «Սակայն ուղարկված նամակում ոչ թե հերքման խոսք կար, այլ պահանջ, որ թերթը ներողություն խնդրի Քոչարյանից սեփական պատիվն ու արժանապատվությունը ոտնահարելու համար»:**

**Օրինակ՝ ՀՀ երկրորդ նախագահին դուր չեն եկել «Երեւի տեղապահ Քոչարյանը ոչ միայն մտքի, այլեւ՝ հիշողության կարճության խնդիր ունի: Երեւի չի հիշում, թե 2003-ի նախագահական ընտրություններում ինքն ինչ ողորմելի վիճակում էր... Իսկ Քոչարյանը, որքան էլ առանձնանում է գավառականությամբ եւ արյունռուշտությամբ, առանձնակի փայլում է անմտությամբ..» եւ այլ տողեր, որոնք, ըստ խմբագրի, տեղեկություն եւ փաստեր չեն պարունակում:**

**«Մենք դիմել ենք Քոչարյանին՝ ասելով, ներկայացրեք հերքման դիմում եւ ասեք, թե որ տողերը չեն համապատասխանում իրականությանը, մենք այն կտպենք, սակայն նրանք որեւէ բան մեզ չուղարկեցին: Եթե նրանք ուզում են, որ մենք հերքենք մարդու վերաբերմունքը, ապա պետք է փոփոխություններ կատարեն սահմանադրության մեջ, որով մարդ զրկվի ազատ կարծիք եւ միտք արտահայտելու իրավունքից», ասաց Արմինե Օհանյանը:**

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

***Խմբ. կողմից.-*** *Կարծում ենք, որ մեր կողմից ընդգծված տողերում ոչ միայն անձնական վիրավորանք, այլեւ պատվի եւ արժանապատվության դեմ ոտնձգություն կա: Ինչ վերաբերում է հատուցման գումարի չափին, կարծում ենք, որ այն անհամաչափ է:*

# Ձերբակալվել է դատաբժշկական կեղծ եզրակացություն տալու համար

**Հատուկ քննչական ծառայության վարույթում շարունակվում է վերջերս Սիսիան քաղաքում բնակիչների միջեւ տեղի ունեցած վիճաբանության, հրազենային վնասվածք պատճառելու եւ այդ գործով ոստիկանության առանձին աշխատակիցների կողմից չարաշահումներ կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը:**

**Ապրիլի 2-ին այդ դեպքով դատաբժշկի կեղծ եզրակացություն տալու կասկածանքով ձերբակալվել է ՀՀ ԱՆ հանրապետական դատական բժշկական գիտագործնական կենտրոնի Սիսիանի բաժանմունքի փորձագետ Սարգիս Հայրապետյանը՝ հարուցված ՀՀ քր. օրի 338-րդ հոդվածի հատկանիշներով:**

**Ս. Ս.**

Φ²¼²Κκο²Ь

# «Առաջ՝ առաջնորդի հետ»

Չնայած Ղազախստանում անցած կիրակի կայացած նախագահական ընտրությունների արդյունքները, ըստ որոնց՝ ձայների 95,5 տոկոսով Նուրսուլթան Նազարբաեւը վերընտրվել է երկրի նախագահի պաշտոնում, դեռեւս նախնական են, դա չի խանգարել Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւին երեկ զանգահարել Նազարբաեւին եւ շնորհավորել նրան վերընտրվելու կապակցությամբ: Ընտրությունների ընթացքին հետեւող ԱՊՀ դիտորդական խումբն իր հերթին «ժողովրդավարական» է որակել Ղազախստանում անցկացված ընտրությունները, մինչդեռ ԵԱՀԿ դիտորդական խումբն այդ կարծիքին չէ: Այս կապակցությամբ ԵԱՀԿ դիտորդական խմբի ղեկավար Դաան Էվերթը նշել է. «Այս ընտրությունները ցույց են տվել, որ ժողովրդավարական ինստիտուտները Ղազախստանում դեռ չեն զարգացել այն աստիճան, ինչպես տնտեսական ինստիտուտները: Դիտորդներն ընդհանուր առմամբ արձանագրել են նույն խախտումները, որոնք տեղ էին գտել նախորդ ընտրություններում», ըստ BBC-ի՝ ասել է Էվերթը: Ավելի վաղ նույն ԵԱՀԿ դիտորդական խումբը արձանագրել էր, որ նախագահական թեկնածուների համար ապահովված չեն հավասար պայմանները, որի պատճառով մի շարք քաղաքական ուժեր բոյկոտել են ընտրությունները: Ընդամենը անցյալ տարի, ինչպես նկատել են եվրոպացի դիտորդները՝ «ԵԱՀԿ ժողովրդավարական չափանիշներին չհամապատասխանող» Ղազախստանը նախագահում էր նույն ԵԱՀԿ-ում: Միգուցե այս, միգուցե սեփական այլ հանգամանքները հաշվի առնելով՝ ԱՊՀ դիտորդական խմբի ղեկավար Սերգեյ Լեբեդեւը մեղադրել է ԵԱՀԿ դիտորդներին՝ «երկակի չափանիշներով առաջնորդվելու» համար:

Մինչ եվրոպացի եւ ԱՊՀ դիտորդները խիստ տարբեր են մեկնաբանում Ղազախստանի ընտրությունները, երկրի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը, ինչպես արդեն նշեցինք, ընդունում է շնորհավորանքներ, եւ հանդես է եկել ելույթով: «Առաջ՝ առաջնորդի հետ» խորագիրը կրող հանդիպման ժամանակ Նազարբաեւը հայտարարել է. «Կարծում եմ, որեւէ երկրում, երբ թեկնածուն հավաքում է ընդհանուր ձայների 90 տոկոսից ավելին, Արեւմուտքի համար զարմանալի է: Ուզում եմ ասել, որ իմ ամբողջ միտքը, ուժերը եւ փորձը ես կներդնեմ հանուն ղազախ ժողովրդի. այդպես եղել է մշտապես եւ այդպես կլինի մշտապես», հայտարարել է «ղազախ ժողովրդի հայրը»՝ հավելելով. «Մենք ցույց տվեցինք ամբողջ աշխարհին, որ աճող երիտասարդ պետություն ենք՝ միջազգային հանրության պատվավոր մասնիկ: Մենք բաց ենք ամբողջ աշխարհի առջեւ, մենք ժողովրդավարական Ղազախստանն ենք»:

Այնուհետեւ, ավելի ուշ, Նազարբաեւի քաղաքական հարցերով խորհրդական Երմուհամմեդ Երտսըբաեւը հայտարարել է. «Չի բացառվում, որ առաջիկա ամռանը Ղազախստանում կայանան արտահերթ խորհրդարանական



ընտրություններ: Ես չեմ բացառում, որ նախագահի երդմնակալությունից հետո պառլամենտն ինքը լուծարվելու որոշում կկայացնի, որպեսզի հնարավորություն տա նախագահին՝ իրականացնելու քաղաքական բարեփոխումները: Երկրի քաղաքական զարգացման տրամաբանությունը դեպքերի հենց այս զարգացումն է հուշում», ասել է Երտսըբաեւը՝ առանց պարզաբանելու, թե կոնկրետ ինչո՞վ է խանգարում երկրի պառլամենտը Նազարբաեւի «քաղաքական բարեփոխումները» իրականացնելու համար: Ավելին՝ Նազարբաեւի խորհրդականը նշել է, որ Ղազախստանի նոր կառավարության կազմը հենց կորոշվի խորհրդարանական ընտրությունների հիման վրա, «եթե դրանք կայանան»: «Եթե պառլամենտի արտահերթ ընտրություններն ի վերջո կայանան, ապա, կարծում եմ, իմաստ չկա կառավարության կազմը փոխելու մինչեւ սեպտեմբեր: Սակայն եթե այդ ընտրությունները չկայանան, ապա հենց այս ապրիլին նախագահը կհայտարարի կառավարության նոր կազմը՝ համաձայն երկրի սահմանադրության», ասել է Երտսըբաեւը՝ «ՌԻԱ Նովոստի» գործակալությանը: Համաձայն Ղազախստանի սահմանադրության՝ նորընտիր նախագահի երդմնակալությունից հետո գործող կառավարությունը պետք է հրաժարական ներկայացնի:

Հավելենք միայն, որ նախնական տվյալներով ԱՊՀ-ում մեր գործընկեր եւ ՀԱՊԿ-ում մեր դաշնակից Ղազախստանի նախագահական ընտրություններում հաղթած, 20 տարի երկիրը ղեկավարող Նուրսուլթան Նազարբաեւը 70 տարեկան է: Նրա հերթական նախագահական ժամկետը լրանում էր 2012-ին, սակայն Նազարբաեւը ինքը հայտարարեց արտահերթ նախագահական ընտրություններ, փաստորեն, եւս մինչեւ 2016-ը առնվազն երկարաձգելով իր պաշտոնավարումը:

Հ. ԱՓՅԱՆ



# «Ֆուկուշիմա-1»-ում փորձում են փակել ռադիոակտիվ ջրի արտահոսքը

*Վթարված 4 էներգաբլոկները կծածկվեն*

Ճապոնական «Ֆուկուշիմա-1» ատոմակայանում փորձում են հայտնաբերել ռադիոակտիվ ջրի արտահոսքի տեղը: Երեկ առավոտյան այնտեղ սկսել են լցնել հատուկ փոշի, որը սպիտակ գույն կտա արտահոսող ջրին:

Ափամերձ գոտում գտնվող ԱԷԿ-ի տեխնիկական ջրհորի պատի վրա շաբաթ օրը գտել էին մոտ 20 սանտիմետրանոց ճեղք, որն անմիջապես բետոնապատել էին, սակայն արտահոսքը չէր դադարել եւ նույնիսկ չէր էլ թուլացել: Կիրակի օրը փորձել էին բացվածքը փակել հատուկ պոլիմերային փոշով, որը կարող է ջուր ներծծել սեփական ծավալի հիսնապատիկ չափով: Բայց այդ տարբերակն էլ չէր օգնել: Արտահոսքը լրջորեն խանգարում է վերականգնողական աշխատանքների վերսկսմանը: Ճառագայթման կտրուկ աճի (նորման գերազանցված է մի քանի հազար անգամ) պատճառով ձգվում է ամենալուրջ խնդրի՝ վթարված ռեակտորների համակարգերի գերտաքացման խնդրի լուծումը: Միջուկային անվտանգության հանձնաժողովի ներկայացուցիչների խոսքերով՝ հովացման համակարգի կարգավորման համար կպահանջվի մի քանի ամիս:

«Շատ կարեւոր է հովացնել ռեակտորները, կայունացնել դրանք, որպեսզի հնարավոր լինի խուսափել նոր վնասվածքներից: Դրա համար հարկավոր է անել երեք բան: Առաջինը վարակված ջրի արտամղումն է տուրբինասրահներից: Երկրորդը ճառագայթման մակարդակի կրճատումն է եւ դրա տարածման հնարավորության կանխումը: Երրորդն այն է, որ մենք պատրաստվում ենք տեղադրել ռեակտորի հովացման մշտապես գործող մեխանիզմ», հայտարարել է Ճապոնիայի միջուկային անվտանգության գործակալության ներկայացուցիչ Հիդեհիկո Նիշիյաման, որի խոսքերը մեջբերում է BBC-ն:

Ճապոնիայի իշխանությունները փորձում են հնարավոր ամեն ինչ անել ճառագայթման տարածումը կասեցնելու համար: Կառավարությունը «Ֆուկուշիմա-1» ԱԷԿ-ի օպերատոր TEPCO ընկերությանը հանձնարարել է վթարված 4 էներգաբլոկները ծածկել հատուկ գործվածքից պատրաստված պաստառներով: Բայց փորձագետները դա անօգուտ են համարում, քանի որ այդ դեպքում ճառագայթումը կկուտակվի կառույցի ներսում եւ կխանգարի վթարի վերացման աշխատանքներին: Շատերը կարծում են, որ պաստառները պարզապես ծածկոցների դեր են կատարելու, որպեսզի հասարակայնությունը չտեսնի ավերված ռեակտորները:

# ԱՄՆ պետքարտուղարի հավանական թեկնածո՞ւ

Ինչպես ենթադրում են որոշ ամերիկյան քաղաքական շրջանակներ՝ շուտով ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնը Հիլարի Քլինթոնը կարող է զիջել Սամանթա Փաուերին: Դեպքերի նման հավանականության համար առիթ է դարձել ամերիկյան New York Times-ի հրապարակումը, որտեղ Փաուերի մասին գովասանական հոդված է տպագրվել: Նշելով, որ Փաուերը Քլինթոնի հետ «Լիբիայի նկատմամբ քաղաքականության ճարտարապետն է», նաեւ «լուրջ հեղինակություն է վայելում Սպիտակ տանը», ամերիկյան պարբերականը մեջբերում է Human Rights Watch-ի գործադիր տնօրեն Քեննեթ Ռոթին, որը թերթին նշել է. «Սպիտակ տանը մարդու իրավունքների պաշտպանության հարցերում Փաուերի խոսքը լսելի է»: Ավելին՝ նա նշել է, որ Փաուերը ազդեցություն ունի նաեւ Օբամայի վրա՝ անձամբ: Ավելորդ չենք համարում նշել, որ «հատկապես մարդու իրավունքների հարցում Սպիտակ տանը լսելի ձայն ունեցող» Փաուերը հեղինակն է «Խնդիր դժոխքից» գրքի, որտեղ դիտարկվում է ԱՄՆ արտաքին քաղաքականության արձագանքը ցեղասպանությունների նկատմամբ: Գրքում համոզմունք է հայտնվում, որ «հայերի, հրեաների, Կամբոջայի եւ Ռուանդայի ցեղասպանությունները տեղի են ունեցել այն պատճառով, որ պետական իշխանությունները աչք են փակել, իսկ առանձին անձինք որոշել են չմիջամտել»:

Դեպքերի նման զարգացումը ԱՄՆ-ում հնարավոր կարող է լինել թերեւս այն պարագայում, երբ հաջորդ տարի կայանալիք նախագահական ընտրություններում Բարաք Օբաման վերընտրվի եւ Հիլարի Քլինթոնը հեռանա: Ի դեպ, Օբաման իր պաշտոնական barakobama.com կայքէջում զետեղել է հայտարարություն, որ ինքը մասնակցելու է 2012-ի ընտրություններին: «Ընտրարշավը մեկնարկած է: Մենք բացում ենք գրասենյակներ ու սկսում զրույցը մեր կողմնակիցների հետ, որպեսզի դուք օգնեք մեզ՝ որոշելու հաղթանակի տանող ճանապարհը: 2012-ը սկսում է այս պահից», նշված է ԱՄՆ նախագահի պաշտոնական կայքէջում:

Հ. Ա.

# Ամերիկացիներին խորհուրդ չի տրվում մեկնել Սիրիա

*Երկրում նշանակվել է նոր վարչապետ*



ԱՄՆ իշխանություններն իրենց քաղաքացիներին կոչ են արել չմեկնել Սիրիա, իսկ դիվանագետների ընտանիքներին եւ ԱՄՆ կառավարության աշխատակիցներին թույլատրել են հեռանալ այդ երկրից:

Պետդեպարտամենտի տարածած հայտարարության մեջ մասնավորապես նշվում է. «Սիրիայում գտնվող ԱՄՆ քաղաքացիները պետք է վերլուծեն անձնական անվտանգության հետ կապված իրավիճակը եւ թերեւս լքեն երկիրը»: Տվյալ նախազգուշացումն արվել է Սիրիայում շարունակվող հուզումների կապակցությամբ, նշում է Ֆրանսպրեսը:

Հայտարարության տեքստում ընդգծվում է, որ Սիրիայում նկատվում է օտարերկրացիների հանդեպ թշնամանքի խորացում, ուստի ԱՄՆ քաղաքացիների կալանավորումը չի բացառվում: Պետդեպարտամենտում կարծում են, որ կալանավորման դեպքում կարող են ներկայացվել լրտեսության մեղադրանքներ:

ԱՄՆ իշխանությունները պատրաստ են Սիրիայից տարհանելու նպատակով անվճար չվերթեր կազմակերպել դիվանագետների հարազատների եւ ամերիկյան կառավարության մյուս աշխատակիցների համար, նշում է Ռոյթեր գործակալությունը:

Սիրիայում հակակառավարական ելույթների մասնակիցները նախագահ Բաշար Ասադից պահանջում են տնտեսական եւ քաղաքական բարեփոխումներ: Արդեն 11 տարի երկիրը ղեկավարող Ասադը ընդունել է վերափոխումների անհրաժեշտությունը եւ մարտի 29-ին արձակել է կառավարությունը: Բայց մինչ այդ իշխանությունները մեծ քաղաքներում զենքի ուժով ցրել էին ցուցարարներին: Վերջիններիս գնահատումների համաձայն, սպանվածների թիվն անցնում է 130-ից: Պաշտոնական իշխանությունները խոսում են 30 սպանվածի մասին:

Երեկ Ռոյթեր գործակալությունը հաղորդեց, որ նախագահ Բաշար Ասադը գյուղատնտեսության նախկին նախարար Ադել Սաֆարին նշանակել է վարչապետ եւ հանձնարարել է կազմել նոր կառավարություն:

# Քադդաֆիի որդիները մշակել են իշխանափոխության ծրագիր

Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիի որդիներից երկուսը հանդես են եկել մի ծրագրով, որն ուղղված է երկրում կառավարման ժողովրդավարացմանը: Ըստ որում, ինչպես գրում է «Նյու Յորք թայմս» թերթը, ծրագիրն իշխանության նոր մարմիններում ղեկավար դեր չի նախատեսում Քադդաֆիի համար:

Թերթը միաժամանակ նշում է, որ նախաձեռնության իրականացումը կարող է դժվարությունների բախվել, քանի որ Քադդաֆիի յոթ որդիների փոխհարաբերություններում առկա են որոշակի հակասություններ: Եթե Սեյֆ ալ Իսլամը եւ Սաադին հակված են իրականացնելու արեւմտյան տիպի տնտեսական ու քաղաքական փոփոխություններ, ապա Խամիսը եւ Մուատասիմ Բիլլահին կոշտ քաղաքականության կողմնակիցներ են:



Քադդաֆիի գրեթե բոլոր որդիները պաշտոններ են զբաղեցնում Լիբիայի իշխանության ղեկավար մարմիններում կամ զինված ուժերում: Անցյալում Սեյֆ ալ Իսլամի անունը քանիցս նշվել է լիբիացի առավել արեւմտամետ քաղաքական գործիչների շարքում:

Լիբիացի ապստամբները իշխանափոխության հարցում հանդես են գալիս շատ արմատական պահանջներով: Այդուհանդերձ, ինչպես պնդում է «Նյու Յորք թայմսի» աղբյուրներից մեկը, նույնիսկ ինքը՝ 68-ամյա Քադդաֆին պատրաստ է համակերպվել իր երկու որդիների մշակած ծրագրին:

Թերթի գնահատմամբ, խաղաղ իշխանափոխության առաջարկությունները «վերջին նշաններն են, որ Քադդաֆիի կառավարությունը հավանաբար ճնշման է ենթարկվում կոալիցիոն ուժերի երկշաբաթյա օդային հարվածներից հետո, որոնք լրջորեն սասանեցին ապստամբների նկատմամբ Քադդաֆիի ուժերի տեխնիկական առավելությունը»:

# Կալկաթայի ճեմարանը 190 տարեկան է

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը հիմնադրվել է 1821 թվականի ապրիլի 2-ին՝ Աստվածատուր Մուրադխանյանի եւ Մնացական Վարդանյանի բարերարությամբ: Կրթօջախը Կալկաթայի երկրորդ ամենահին դպրոցն է:

2011 թվականի ապրիլի 2-ին Կալկաթայում նշվեց Մայր աթոռ Սբ Էջմիածնի հովանու ներքո գործող Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 190-ամյակը: Ձեռնարկը մեկնարկեց Տերունական աղոթքով եւ Հնդկաստանի ու Հայաստանի Հանրապետության օրհներգերով:

Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի կրթական տնօրենը: Այնուհետեւ Մարդասիրականի պարախումբը ներկայացրեց մի գեղեցիկ հնդկական պար, որին հաջորդեց կրթօջախի երգչախմբի ելույթը: Ապա 2010-2011 ուսումնական տարվա շրջանավարտներին հանձնվեց ճեմարանի անունը կրող ժամացույցներ, իսկ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պարգեւատրվեցին գովասանագրերով եւ ստացան խրախուսական նվերներ:

Հանդիսության ընթացքում ցուցադրվեց Հնդկահայքի երեւելիների եւ հայ-հնդկական հարաբերությունների մասին պատմող տեսանյութ: Հանդիսության բարձրակետը Ն. Ս.



Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Կալկաթայում լույս տեսած «Հնդկահայք» երկլեզվի (հայերեն-անգլերեն) երկրորդ տարեգիրքն էր, որը ներկայացրեց գրքի հիմնադիր-հրատարակիչ, հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ **Հայր Խորեն Հովհաննիսյանը**: «Հնդկահայք 2010»-ում խսացել են հնդկահայոց հոգեւոր հովվության եւ Հնդկաստանում «կտոր մը Հայաստանի»՝ Հայոց մարդասիրական ճեմարանի անցուդարձը, մեր շնորհալի ուսանողների ուսումնական ու մարզական նվաճումները: Տարեգրքում տեղ են գտել հնդկահայ համայնքի հարյուրամյակների պատմությունը լուսաբանող հոդվածներ, ինչպես նաեւ աշխարհի տարբեր ծագերից անդրանիկ հրատարակությունը գնահատող եւ արժեւորող նամակներ, որոնք պարտավորեցնող էին եւ խթան հանդիսացան **«Հնդկահայք-2010»-ը** կյանքի կոչելու գործում:

Հանդիսությունը հարգանքի տուրք էր դպրոցի հիմնադիրների պայծառ հիշատակին:

**ԼՈՒՐԵՐ**

## Տարվա լավագույն պատմվածքի մրցույթ

**«Անտարես» հրատարակչությունը, նպատակ ունենալով բացահայտելու ժամանակակից հայ հեղինակներին ու նրանց ստեղծագործությունները հասու դարձնել ընթերցողներին, հայտարարում է 2011 թ. տարվա լավագույն պատմվածքի «Արձակ» մրցույթի մեկնարկը մարտի 15-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը: Հաղթողները հայտնի կլինեն հոկտեմբերի կեսերին: Մրցույթի համար սահմանվել է երեք մրցանակային տեղերի դրամական պարգեւ՝ 1-ին տեղի համար - 300.000 դրամ, 2-րդ՝ - 100.000 դրամ, 3-րդ՝ - 50.000 դրամ, նաեւ «Արձակ» մրցանակի դափնեկրի վկայագիր: Բացի դրանից, մրցանակ կտրվի նաեւ «Իմ հեղինակը» անվանակարգում, որը կորոշվի ընթերցողների առցանց քվեարկության միջոցով:**

**Մրցույթին մասնակցել ցանկացողները մանրամասներին կարող են ծանոթանալ antares.am/artzak կայքէջից:**

**Մ. Մ.**

## «Չորեքշաբթի... սիրելիս» պիեսը «Արտավազդի» ներկայացմամբ

**ՀԲԸՄ-ից ստացված մարտի 29-ի հաղորդագրությունը տեղեկացնում է, որ հունվար-փետրվար ամիսներին ՀԲԸՄ-ի Փասադենայի կենտրոնում ամեն շաբաթավերջին երկուական անգամ ներկայացվել է 1982-ին գրված դրամատուրգ Դերեք Բենֆիլդի «Չորեքշաբթի... սիրելիս» կատակերգությունը ճանաչված դերասան եւ բեմադրիչ Գրիգոր Սաթամյանի թարգմանությամբ:**

**Տասներկու ներկայացումներին, որոնք բարձր են գնահատվել մամուլի կողմից, մոտ երկու հազար մարդ է ներկա գտնվել: Ավելացնենք, որ Բելֆիլդը (1926-2009) հանրաճանաչ բրիտանացի դրամատուրգ է, հեղինակ ավելի քան 30 կատակերգությունների, որոնցում նա խարազանել է եվրոպական բուրժուական կյանքի արատավոր բարքերը:** Հ. Ծ.

## Գեղարվեստի պետական ակադեմիայի 65-ամյա հոբելյանը



**Երեւանի գեղարվեստի ակադեմիան (նախկինում գեղարվեստական ինստիտուտ) 65-ամյա կրթական գործունեության փորձ ունի: Հիմնադրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին (1945)՝ զարմանալիորեն երկրի՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական ամենաքայքայված, դժվարին շրջանում: Սրա հոգեբանական, նաեւ բարոյական նշանակությունն է հասկատես ուշարժան, երբ նման պայմաններում հենց գեղարվեստի, գեղագիտության կրթությունն է պետականորեն համարվել առաջնային:**

**Անցած այս տասնամյակներին բուհում գեղարվեստի կրթություն ստացան հազարավոր երիտասարդներ, ընդլայնվեցին ուսումնա-կրթական բազան, ծրագրերը, ձեւավորվեցին ավանդույթներ: Ներկայում ակադեմիայում մասնագիտական կրթություն են ստանում կերպարվեստի տեսության, գեղանկարչության, գրաֆիկայի, քանդակագործության, դիզայնի, հագուստի մոդելավորման, կիրառական արվեստի, համակարգչային գրաֆիկայի բաժիններում: Ակադեմիան, ընդլայնելով տարածքները, երկու մասնաճյուղեր բացեց Դիլիջանում եւ Գյումրիում: Գեղակադեմիան բուհական մեր համակարգում իր արժեքավոր տեղն է զբաղեցնում, եւ նրա պատկառելի ներդրումը մեր մշակութային զարգացումներին՝ ակնհայտ է:**

**Գեղակադեմիայի հիմնադրման 65-ամյակը կնշվի այսօր, Նկարիչների միությունում բացվող հոբելյանական ցուցահանդեսով, որից հետո հանդիսավոր արարողությունը կկայանա Ազգային պատկերասրահի որմնանկարների դահլիճում:** Մ. Բ.

**ԿԱԼԻՖՈՐՆԻԱ**

## Լեոնարդո Ալիշանի բանաստեղծությունների նոր ժողովածու

«Բլայնդ Օուլ» հրատարակչությունը Լուսյըն Սթոունի խմբագրությամբ եւ առաջաբանով լույս է ընծայել վաղամեռիկ իրանահայ բանաստեղծ, կարճ պատմվածքների հեղինակ եւ դրամատուրգ Լեոնարդո Ալիշանի բանաստեղծությունների նոր ժողովածուն «Մեռած մարդու ստվերը» ընդհանուր խորագրով, տեղեկացնում է «Արմենյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Լեոնարդո Ալիշանը (1951-2005) ծնվել էր Թեհրանում, բայց 1973-ին տեղափոխվել Միացյալ Նահանգներ, որտեղ ուսումն ավարտելուց հետո պարսկական եւ համեմատական գրականություն առարկաներն էր դասավանդել 1978-1997 թվականներին Սոլտ Լեյք Սիթիի «Յուտա Համալսարանում»: Բնակարանային հրդեհի զոհ էր գնացել 2005-ին: Իր ողջությանը հրատարակել էր բանաստեղծությունների երկու ժողովածու՝ «ոտաբոբիկ պարելով կոտրած ապակիների վրա» (1991 թ.) եւ «Ցողի կաթիլների միջով» (2000) խորագրերով: Իր բանաստեղծությունները ու կարճ պատմվածքները ընդգրկված են տարբեր անթոլոգիաներում: Արժանացել էր գրական մի շարք՝ այդ թվում «Ամերիկայի բանաստեղծների Ակադեմիայի», «Քրիստոֆեր Մոուլիի անվան» «Էն իրվինգի գրական» եւ «Ասլանտա Ռիվյուի միջազգային երախտիքի» մրցանակներին: Ալիշանի հետմահու նոր ժողովածուն կազմող՝ Լուսյըն Սթոունը ներկայիս Հյուսիսային Դակոտայի համալսարանում դասավանդում է կրոն եւ փիլիսոփայություն առարկաները, եւ ուսումնասիրություններ կատարում սուֆիզմի, իսլամական փիլիսոփայության, արվեստ-գրականություն-իրանական ինտելեկտուալ պատմություն համեմատական առնչությունների բնագավառներում:

Հ.Ծ.

## Սամսոն Գասպարյան երաժշտագետն ու գործիչը

Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի երաժշտական բաժնի ֆոնդերում, ի թիվս հայ երաժշտության երախտավորների, իր տեղն ունի նաեւ երաժշտագետ **Սամսոն Գասպարյանի** արխիվը: Այն ընդգրկում է երաժշտագետի գիտական աշխատությունները, հրապարակախոսություն, երաժշտական ստեղծագործություններ, բանաստեղծություններ, նամակներ, անձնական փաստաթղթեր, կենսագրությանն առնչվող նյութեր, լուսանկարներ, գրքեր, մամուլ եւ այլն (ավելի քան 2000 փաստաթուղթ):

Թանգարանի հրատարակչությունը «Կոմիտաս» հրատարակչության հետ համատեղ պետական պատվերով հրատարակել է «Սամսոն Գասպարյան երաժշտագետն ու գործիչը» գիրքը: Մենագրական բնույթի այս գիրքը լույս է ընծայվել խմբագիր Մարինե Հարոյանի եւ կազմող Ցողիկ Բեքարյանի աշխատասիրությամբ:

Գիրքը ներկայացնում է հայ մշակույթի երջանկահիշատակ երախտավորներից մեկի՝ երաժշտագետ-գործիչ Սամսոն Գասպարյանի կյանքն ու բազմաբովանդակ գործունեությունը: Աշխատելով Խորհրդային Հայաստանի պետական տարբեր հաստատությունների ղեկավար պաշտոններում՝ Գասպարյանն իրեն դրսեւորել է որպես նվիրյալ, իր գործին պատասխանատվության բարձր զգացումով վերաբերող, առաջնային խնդիրներին ճիշտ լուծում տվող ղեկավար:

Գրքում որպես հավելված զետեղված են տարբեր տարիներին հրատարակված՝ Գասպարյանի աշխատությունների ցանկը, պարբերական մամուլում լույս տեսած երաժշտական հոդվածներ, գրախոսություններ եւ նամակներ:

Ֆոնդում պահվող բազմաթիվ նամակներից եւ հոդվածներից ընդգրկված են այնպիսիները, որոնք առավել հստակ եւ բազմակողմանիորեն են լուսաբանում Ս. Գասպարյան մարդու, երաժշտագետի, հասարակական գործչի կերպարը, որոնք հարուստ տվյալներ են պարունակում երաժշտագետի թե՛ անձնական եւ թե՛ տվյալ ժամանակահատվածի մշակութային-հասարակական կյանքի մասին:

Սամսոն Գասպարյանը եղել է ամենատարբեր վարչական պատասխանատու ղեկավարի պաշտոններում. Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն (1937), Երեւանի պետական կոնսերվատորիայի ռեկտորի տեղակալ, ապա՝ ռեկտոր (1937-1940), Քաղսովետի գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ (1940), ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին առընթեր արվեստի գործերի վարչության պետի տեղակալ (1941), համատեղությամբ Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի տնօրեն (1943), ընտրվելով Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ՝ նորից դառնում է պատասխանատու քարտուղար (1945), ՀԽՍՀ կինեմատոգրաֆիայի նախարար




(1947), ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի թատրա-երաժշտական թանգարանի տնօրեն (1949-1954) եւ ՀԽՍՀ մշակույթի նախարարի տեղակալ՝ 1954-1974 մինչեւ կյանքի վերջ: Ինչպես իրավացիորեն գրում է արվեստագիտության դոկտոր Մաթեւոս Մուրադյանը Սամսոն Գասպարյանին նվիրված իր գրքույկում. «Միմյանցից շատ են տարբեր կոնսերվատորիան եւ Քաղսովետը, կոմպոզիտորների միությունը եւ կինեմատոգրաֆիայի մինիստրությունը: Բայց Սամսոն Գասպարյանը կարողացել է գտնել այդ բնագավառներից յուրաքանչյուրի էական հատկանիշը եւ շեշտը դնել դրա վրա»:

Երաժշտագետ Արաքսի Ասրյանի բնորոշմամբ, որ ամենակարեւորը Սամսոն Գասպարյանն այս բոլոր պաշտոններում շարունակում էր մնալ արվեստագետ-երաժշտագետ, ինչից եւ բխում էր նրա ղեկավարության սկզբունքներն ու մտահոգությունները: Պատահական չէ, որ նույն այս տարիներին ստեղծվում էին հայ երաժիշտներին նվիրված նրա մենագրությունները, հայկական եւ քրդական երգերի ժողովածուները, պարբերական մամուլում հրապարակվում էին հանրապետության երաժշտական կյանքի անցուդարձը պարզաբանող բազում հոդվածներ, գրախոսություններ, առաջ քաշվում պրոբլեմատիկ կարեւոր հարցադրումներ:

Գրքից տեղեկանում ենք, որ ջերմ մտերմություն եւ փոխադարձ հարգանք է հաստատվել Ռոմանոս Մելիքյանի եւ Սամսոն Գասպարյանի միջեւ:

Նամակների հասցեատերերի անվանացանկն արդեն խոսուն է. Արամ Խաչատրյան, Ռոմանոս Մելիքյան, Խաչատուր Եսայան, Էմմա Ծատուրյան, Վահրամ Փափազյան, Դերենիկ Դեմիրճյան, Անտոն Քոչինյան, Վլասով, Սեմյոն Գինզբուրգ. այսինքն՝ թե մշակույթի, թե այլ ոլորտի, թե քաղաքական եւ հասարակական գործիչներ:

Գրքում տեղ են գտել ինչպես Ս. Գասպարյանի ֆոնդում, այնպես էլ ԳԱԹ-ի երաժշտական, թատերական եւ գրական բաժիններում գտնվող նամակները, որոնք ներկայացված են հասցեատերերի ազգանունների այբբենական հաջորդականությամբ՝ պահպանելով ներքին ժամանակագրական կարգը:

Փաստաթղթերի գերիշխող մասը տպագրվում է բնագրից, առաջին անգամ: Նամակները հետաքրքիր եւ արժեքավոր են նրանով, որ երաժշտագետ Սամսոն Գասպարյանը երեւում է իր ներաշխարհով ու նախասիրություններով:

Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսյանը գրում է. «Ինձ համար, որպես հոգեւորականի, անգնահատելի է այն փաստը, որ Սովետական միության տարիներին Սամսոն Գասպարյանը զբաղվել է նաեւ հայ հոգեւոր երգով՝ դառնալով նրա ուսումնասիրողը, տարածողը եւ անուղղակի կերպով ջատագովը, ինչպես նաեւ մեզ հայտնի եւ շատ պաշտելի լուսահոգի Լուսինե Զաքարյանը, ազդվելով յուր ժամանակին Գասպարյանի ուսումնասիրություններից, դիմել է հոգեւոր երգին եւ դարձել հայ շարականի «Սոխակը»: Կան մարդիկ, որոնք ամեն օր, ամեն ժամ իրենց մեծագույն լուման են ներդնում հայ մշակույթի գանձարանի մեջ, հիմք են դնում ապագա սերունդների համար: Նրա արածը իրոք սխրագործություն է, ինչն էլ գալիս է բարձր ազգային գիտակցությունից, հայրենասիրությունից ու կատարյալ նվիրումից, որով մենք ե՛ւ պիտի ուրախանանք, ե՛ւ պարծենանք ու երախտագետ լինենք՝ միշտ անմար պահելով նման երախտավորների հիշատակը»:

ԱՐՓԻՆԵ ԱՍԼԱՆՅԱՆ

# Մարզական

## Ռոման Ամոյանը կրկին ուժեղագույնն է Եվրոպայում

### Հունահռոմեական ոճի ըմբիշները 4 մեդալ նվաճեցին

Դորտմունդում ավարտվեց ըմբշամարտի Եվրոպայի հերթական առաջնությունը: Վերջինը մրցասպարեզ դուրս եկան հունահռոմեական ոճի ըմբիշները: Ի տարբերություն ազատ ոճայինների, Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբիշները շատ ավելի հաջող հանդես եկան: Քաշային 7 կարգերից 4-ում մեր ըմբիշներն արժանացան մեդալների (1 ոսկե, 1 արծաթե, 2 բրոնզե):

Գերազանց ելույթ ունեցավ Պեկինի օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր, Եվրոպայի չեմպիոն Ռոման Ամոյանը (55 կգ): Մարզիչներ Համլետ Հովհաննիսյանի եւ Հարություն Խաչատրյանի սանը Դորտմունդում 5 գոտեմարտ անցկացրեց եւ բոլորն էլ շահեց ընդհանուր 42-0 հաշվով: Սա վկայում է մրցակիցների նկատմամբ հայ ըմբիշի ունեցած զգալի առավելության մասին: Ռոման Ամոյանն արժանիորեն 2-րդ անգամ հռչակվեց Եվրոպայի չեմպիոն:

Առաջին գոտեմարտում Ռոմանը մեծ առավելությամբ հաղթեց լատվիացի Ռամունաս Դագիսին (9-0), այնուհետեւ պարտության մատնեց վրացի Լաշա Գոգիտաձեին (4-0): 3-րդ գոտեմարտում հայ ըմբիշի մրցակիցը ռուսաստանցի Վալերի Բորզոյակովն էր: Նա եւս չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ Ամոյանին՝ պարտվելով 0-11 հաշվով: Կիսաեզրափակիչ եւ վճռորոշ գոտեմարտերում Ամոյանի մրցակիցներն ադրբեջանցիներն էին: Կիսաեզրափակիչում հայ ըմբիշը




13-0 հաշվով պարզապես ջախջախեց Էլդանիզ Ազիզլիին: Եզրափակիչում Ամոյանին հարկ եղավ գոտեմարտել Ուկրաինան ներկայացնող ադրբեջանցի Վյուգար Ռահիմովի հետ: Վճռորոշ գոտեմարտում էլ Ամոյանն իրեն հիանալի դրսեւորեց ու հաղթելով 5-0 հաշվով, նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

Մինչեւ 96 կգ քաշային կարգում գյումրեցի Արթուր Ալեքսանյանը, որին մարզում է հայրը՝ նախկինում անվանի ըմբիշ Գեւորգ Ալեքսանյանը, դարձավ Եվրոպայի մեծահասակների առաջնության արծաթե մրցանակակիր: Աշխարհի երիտասարդների անցյալ տարվա չեմպիոնը եւս վստահ հանդես եկավ առաջնությունում՝ հասնելով մինչեւ եզրափակիչ: Նա եզրափակիչի ճանապարհին հաջորդաբար հաղթեց չեռնոգորցի Վլադիմիր Ռադոսլավլեւիչին (6-0), վրացի Սոսո Ջաբիձեին (8-0), նորվեգացի Մարտին Նիլսենին (9-1) եւ բուլղարացի Էլիս Գուրիին (4-3): Եզրափակիչում Ալեքսանյանի մրցակիցը բելառուսցի Տիմոֆեյ Դենիսենկոն էր: Այս անգամ հայ ըմբիշին չհաջողվեց հաղթել: 2-0 հաշվով շահելով գոտեմարտը, Դենիսենկոն ուժեղագույնը ճանաչվեց Եվրոպայում:

Սպասելիքները մեծ էին Պեկինի օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր, Եվրոպայի քառակի չեմպիոն (2-ը՝ Հայաստանի հավաքականի կազմում), աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, գերծանրքաշային Յուրի Պատրիկեեւից: Սակայն սպասելիքները չարդարացան: Հաղթելով հույն Քսենոֆոն Կուտսիումպասին եւ խորվաթ Անտոն Դոկին, Պատրիկեեւը կիսաեզրափակիչում պարտվեց թուրք Ռիզա Կայալփին: Վերջինս մտավ եզրափակիչ, որտեղ զիջեց ռուսաստանցի Հասան Բարոեւին: Իսկ Պատրիկեեւը ստիպված էր պայքարել բրոնզե մեդալի համար: Այդ պայքարում նա հաղթեց շվեդ Մագնուս Եուրենին եւ արժանացավ բրոնզե մեդալի: Նշենք, որ Պատրիկեեւի անձնական մարզիչը Սամվել Գեւորգյանն է:

Եվս մեկ բրոնզե մեդալ ՀՀ հավաքականին պարգեւեց 84 կգ քաշային Արթուր Շահինյանը: Երիտասարդների աշխարհի եւ Եվրոպայի փոխչեմպիոնը, որին մարզում է Արթուր Թովմասյանը, առաջին գոտեմարտը շահեց չեռնոգորցի Պրեդրագ Ստանոջեւիչից: Սակայն հաջորդ գոտեմարտում նա պարտվեց ռուսաստանցի Ալան Խուգաեւին: Քանի որ վերջինս հասել էր մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտվեց ուկրաինացի Վասիլի Ռաշիբային, ուստի Շահինյանը հնարավորություն ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար: Հաղթելով իտալացի Վինչենզո Շիբիլիային եւ գերմանացի Յան Ֆիշերին, Արթուրն արժանացավ բրոնզե մեդալի:

Մեդալի ակնկալիքներ ունեինք նաեւ մինչեւ 74 կգ քաշային կարգում հանդես եկած մեր տիտղոսակիր ըմբիշ Արսեն Ջուլֆալակյանից: Սակայն մեդալ նվաճել չհաջողվեց: Քաշային այս կարգում մրցագործ էին դուրս եկել 33 ըմբիշներ: 1/8 եզրափակիչում Արսենը հաղթեց բելառուսցի Ալեքսանդր Դեմյանովիչին, սակայն հաջորդ փուլում պարտվեց հունգարացի Պետեր Բակսիին: Վերջինս եզրափակիչում զիջեց ադրբեջանցի Ռաֆիկ Հուսեյնովին: Իսկ Արսենը հնարավորություն ստացավ պայքարելու բրոնզե պարգեւի համար: Առաջին 2 գոտեմարտերում նա հաջողության հասավ բրիտանացի Միրոսլավ Դյուկինի եւ ֆինն Հենրի Վալիմակի նկատմամբ, սակայն վճռորոշ գոտեմարտում բրոնզե մեդալը զիջեց ռուսաստանցի Ռոման Վլասովին:

Մինչեւ 66 կգ քաշային կարգում Սասուն Ղամբարյանը պայքարից դուրս մնաց առաջին գոտեմարտից հետո՝ պարտվելով վրացի Անտոն Մամագեյշվիլուն: Մինչեւ 60 կգ քաշային Վահան Ջուհարյանն էլ առաջին գոտեմարտում հաղթելով իտալացի Լորենցո Ձենտիլեին, 2-րդում պարտվեց ռումինացի Էյուբիո Դիակոնուից եւ դուրս մնաց հետագա պայքարից:

Թիմային պայքարում Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը գրավեց 2-րդ տեղը՝ իրենից առաջ թողնելով միայն ՌԴ հավաքականին, որը նվաճեց 2 ոսկե, մեկական արծաթե եւ բրոնզե մեդալ: Հաջորդ տեղերում են Ուկրաինայի (1-1-0), Ադրբեջանի (1-0-3) եւ Վրաստանի (1-0-0) հավաքականները:

## Մարզական բախտը երես էր թեքել «Փյունիկից»



Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի ընթացիկ առաջնությունը բավական հետաքրքրական պայքարում է ընթանում: Առաջնության 3-րդ տուրում երկրի չեմպիոն «Փյունիկն» անդրանիկ պարտությունը կրեց՝ 0-1 հաշվով զիջելով «Ուլիսին»: Հետաքրքրական է, որ նախորդ առաջնությունում էլ «Փյունիկին» առաջինը պարտության էր մատնել «Ուլիսը» (3-1), սակայն դա տեղի էր ունեցել 11-րդ տուրում: Իսկ այս տարի չեմպիոնն արդեն 3-րդ տուրում անհաջողության մատնվեց ու զիջեց առաջատարի իր դիրքը:

«Ուլիսի» հետ խաղում «Փյունիկը» կազմի կորուստներ ուներ: Ինչպես հայտնի է, Կառլեն Մկրտչյանը մեկնել է Դոնեցկ ու հանդես է գալու տեղի «Մետալուրգում»: Հիվանդության պատճառով խաղին չմասնակցեց Գեւորգ Ղազարյանը, իսկ թիմի ավագ Սարգիս Հովսեփյանը վնասվածքի պատճառով ընդմիջումից հետո խաղադաշտ դուրս չեկավ: Թեեւ այս ամենին, «Փյունիկն» ավելի մոտ էր հաղթանակին՝ ավելի շատ գոլային պահեր ստեղծելով մրցակցի դարպասին: Սակայն այդ օրը մարզական բախտը կարծես երես էր թեքել փյունիկցիներից: Երեք անգամ Մարկոսի եւ Մանուչարյանի հարվածներից հետո գնդակը դիպավ դարպասաձողին: Խաղային մի քանի դրվագներում էլ հաջող խաղաց «Ուլիսի» դարպասապահ Վլադիմիր Մալկովը՝ հետ մղելով նույն Մարկոսի եւ Մանուչարյանի վտանգավոր հարվածները:

Չեմպիոնի հետ խաղում «Ուլիսը» շեշտը դրել էր հակագրոհների վրա՝ հստակ գործելով պաշտպանությունում: Ընդմիջումից հետո կատարված փոփոխությունների շնորհիվ ուլիսցիները զգալիորեն ակտիվացրին հարձակողական գործողությունները եւ ի վերջո հասան ցանկալի արդյունքի: Խաղավարտից 2 րոպե առաջ «Փյունիկի» դարպասը գեղեցիկ ու դիպուկ հարվածով գրավեց Արտյոմ Ադամյանը: Այս հաղթանակի շնորհիվ «Ուլիսն» իր պատմության մեջ առաջին անգամ գլխավորեց աղյուսակը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Վարդան Մինասյան** («Փյունիկ»)-Այսօր մեր թիմի ֆուտբոլիստները ցուցադրեցին ընթացիկ մրցաշրջանում իրենց լավագույն խաղը: Գոհ եմ նրանց գործողություններից: Հանդիպումը պետք է ավարտվեր 5-1 հաշվով, սակայն մարզական բախտը կարծես երես էր թեքել մեզանից ու մենք պարտվեցինք:

**Սեւադա Արզումանյան** («Ուլիս»)-Հաշվի առնելով «Փյունիկի» ֆուտբոլիստների խաղային բարձր որակները, առաջին խաղակեսում հիմնական ուշադրությունը դարձրել էինք պաշտպանությանը: Ընդմիջումից հետո ձգտեցինք հարձակողական ֆուտբոլ ցուցադրել: Թեեւ փյունիկցիները գոլային ավելի շատ պահեր ստեղծեցին, սակայն տղաների նվիրվածության եւ ինչ-որ տեղ էլ մարզական բախտի շնորհիվ չափազանց կարեւոր 3 միավոր վաստակեցինք: Առջեւում «Շիրակի» հետ գավաթի կիսաեզրափակիչ առաջին հանդիպումն է: Ուստի հարկավոր է վերականգնել տղաների ուժերը:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում նաեւ «Միկայի» եւ «Բանանցի» մրցավեճը: Ընդամենը մի քանի օր առաջ նրանց գավաթային մրցավեճն ավարտվել էր մարտական ոչ-ոքի՝ 3-3: Այս անգամ կրկին գրանցվեց ոչ-ոքի, սակայն դարպասները մնացին անառիկ: Թիմերին չհաջողվեց գոլային շատ պահեր ստեղծել: Մրցակիցներն այս անգամ ուշադիր էին գործում պաշտպանությունում:

Կապանում «Գանձասարի» եւ «Շիրակի» մրցակցության ելքը վճռվեց խաղասկզբում տուգանային հարվածով Արթուր Քոչարյանի խփած միակ գոլի շնորհիվ: Առանց պարտության հանդես եկող «Գանձասարն» անդրանիկ հաղթանակը տոնեց, իսկ «Շիրակն» առաջին անգամ խաղադաշտը թողեց պարտված:

Առաջնության երկու հետնապահների՝ «Իմպուլսի» եւ «Արարատի» մրցավեճում 2-0 հաշվով հաղթեցին դաշտի տերերը: Թիմի հաղթանակն ապահովեցին Հովհաննես Գոհարյանի եւ Զավեն Բադոյանի խփած գոլերը: «Իմպուլսն» առաջին հաղթանակը տոնելով, հեռացավ վերջին տեղից՝ հետնապահի դերը զիջելով «Արարատին»:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ուլիս | 3 | 2 | 1 | 0 | 4-1 | 7 |
| 2. Միկա | 3 | 1 | 2 | 0 | 3-0 | 5 |
| 3. Գանձասար | 3 | 1 | 2 | 0 | 2-1 | 5 |
| 4. Փյունիկ | 3 | 1 | 1 | 1 | 2-2 | 4 |
| 5. Շիրակ | 3 | 1 | 1 | 1 | 2-2 | 4 |
| 6. Իմպուլս | 3 | 1 | 0 | 2 | 3-3 | 3 |
| 7. Բանանց | 3 | 0 | 2 | 1 | 2-4 | 2 |
| 8. Արարատ | 3 | 0 | 1 | 2 | 1-6 | 1 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Արթուր Քոչարյան | «Գանձասար» | 2 |
| Արտյոմ Ադամյան | «Ուլիս» | 2 |

## Ուղեգիր նվաճել էլ չհաջողվեց

**Ֆրանսիայում վերջնագիծը հատեց շախմատի Եվրոպայի տղամարդկանց 12-րդ անհատական առաջնությունը, որում բացի մեդալներից, խաղարկվեցին նաեւ աշխարհի գավաթի խաղարկության 23 ուղեգրերը: Ցավոք, Հայաստանը ներկայացնող 9 շախմատիստներն էլ անմասն մնացին խաղարկվող պարգեւներից եւ ուղեգրերից:**

**Մեր շախմատիստներից լավագույն արդյունքի հասավ Արման Փաշիկյանը, որը 7,5 միավորով գրավեց 38-րդ տեղը 393 մասնակիցների մեջ: Ավարտական 2 տուրերում նա ոչ-ոքի խաղաց Բորիս Էսենի հետ եւ հաղթեց ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանին:**

**7-ական միավոր վաստակեցին Սամվել Տեր-Սահակյանը (50-րդ տեղ), Ավետիք Գրիգորյանը (54-րդ), Վլադիմիր Հակոբյանն (58) ու Զավեն Անդրեասյանը (65-րդ): Գաբրիել Սարգսյանը 6 միավորով 127-րդն է: Նույնպիսի արդյունքով ՀՀ չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանը զբաղեցրեց 154-րդ հորիզոնականը: Հրանտ Մելքումյանը 5 միավորով 228-րդ տեղում է, իսկ Վլադիմիր Պողոսյանը 4,5 միավորով հանգրվանեց 310-րդ հորիզոնականում: Ֆրանսահայ Տիգրան Ղարամյանը 7 միավորով գրավեց 63-րդ տեղը, իսկ ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանը 6,5 միավորով զբաղեցրեց 85-րդ հորիզոնականը:**

**Եվրոպայի չեմպիոնը որոշվեց լրացուցիչ գործակիցներով: Չորս շախմատիստներ՝ ռուսաստանցի Վլադիմիր Պոտկինը, լեհ Ռադոսլավ Վոյտաշեկը, հունգարուհի Յուդիթ Պոլգարը եւ ուկրաինացի Ալեքսանդր Մոիսեենկոն վաստակեցին հավասար՝ 8,5-ական միավոր: Ավարտական տուրում Պոտկինը հաշտություն կնքեց Պոլգարի հետ, Վոյտաշեկը միավորը կիսեց Պյոտր Սվիդլերի հետ մրցավեճում, իսկ Մոիսեենկոն հաղթեց Լուկ Մակշեյնին: Լրացուցիչ գործակիցներով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճեց Վլադիմիր Պոտկինը, որը բացի ոսկե մեդալից, պարգեւատրվեց նաեւ 20 հազար եվրոյով: 28-ամյա Պոտկինի մարզական կարիերայում Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի նվաճումն առայժմ ամենամեծ հաջողությունն է: Արծաթե մրցանակակիր դարձավ լեհ Ռադոսլավ Վոյտաշեկը՝ արժանանալով 15 հազար եվրոյի: Բրոնզե մեդալը բաժին հասավ հունգարուհի Յուդիթ Պոլգարին: Նա ստացավ 11 հազար եվրո: Հաջող մրցելույթների շնորհիվ հունգարացի շախմատիստուհին իր վարկանիշն ավելացրեց 15-ով եւ երկարատեւ ընդմիջումից հետո կրկին ընդգրկվեց 2700 եւ ավելի վարկանիշ ունեցող շախմատիստների շարքը: Վերջին անգամ նա այդ սահմանագիծը հատել էր 2008-ին: Այժմ Պոլգարի ընթացիկ վարկանիշը 2706 է:**

## Կրակոցները խանգարեցին մենամարտի կայացմանը

**WIBF-ի եւ WIBA-ի վարկածներով թեթեւ քաշում բռնցքամարտի աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Ռոլա Էլ Հալաբին հրազենային վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել, որտեղ վիրահատվել է: Նույն ճակատագրին են արժանացել նաեւ նրա 2 թիկնապահները:**

**Դժբախտ միջադեպը տեղի է ունեցել հանդերձարանում, որտեղ 25-ամյա լիբանանցի մարզուհին պատրաստվում էր բոսնիացի Իրմա Բալիյաջիչ Ադլերի հետ մենամարտին: Այդ պահին հանդերձարան է ներխուժել 44-ամյա մի տղամարդ եւ կրակել է մարզուհու ձեռքին, ծնկին եւ ոտնաթաթին: Ոստիկանությանը հաջողվել է ձերբակալել հանցագործին: Պարզվել է, որ նա Ռոլա Էլ Հալաբիի**



**խորթ հայրն ու նախկին մենեջերն է: Այժմ մարզուհու մարզական հետագա կարիերան կասկածի տակ է:**

**Էլ Հալաբին WIBF-ի եւ WIBA-ի վարկածներով աշխարհի չեմպիոնուհու տիտղոսները նվաճել է 2009-ին: Մարզական կարիերայում նա 11 մենամարտ է անցկացրել՝ հաղթելով բոլորում: 6 անգամ նա մրցակցուհիներին նոկաուտի է ենթարկել:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

## Ի՞նչ էր երազում Էլման Մամեդովը

*Մեր տրամադրության տակ է «Խոջալուի գործադիր իշխանության ղեկավար» Էլման Մամեդովի օրագրից մի հատված:*

*Ըստ այդմ, նա առաջին գրառումը կատարել է 1991թ. նոյեմբերի 11-ին: Այն վերնագրված է. «Նախապատրաստություն Ադր. պրեզիդենտ ընկեր Ա. Ն. Մութալիբովի հետ հանդիպմանը. Բաքու»:*

*Քաղաքական օրակարգից Էլման Մամեդովն առանձնացրել է հետեւյալը.*

*- ԼՂԻՄ-ում պրեզիդենտի լիազոր ներկայացուցչություն- խիստ անհրաժեշտ է,*

*- Կենտրոնակայանն ինչո՞ւ է տեղաբաշխվում Աղդամում,*

*- Պոլյանիչկոյի մասին......*

*- Մարզում գտնվող 3+1- ի մասին,*

*- Ալիֆի հետ մեր ունեցած խոսակցության մասին,*

*Հիմնական հարցը- պաշտպանության եւ անվտանգության միջոցառումներ:*

*Ծառայողական ավտոմեքենա:*

*Այնուհետեւ անցել է «լրացուցիչ նկատառումներ»-ին եւ գրել.*

*- Գործադիր իշխանության ղեկավարի աշխատակազմի ֆինանսավորում, հաստիքներ եւ այլն,*

*-Մ. Ասադովի հետ հանդիպում,*

*- :*

Ասվածից հետեւում է, որ՝

- հիշյալ օրն Էլման Մամեդովը գտնվել է Բաքվում եւ նախապատրաստվել Ա. Մութալիբովի հետ հանդիպմանը,

- նա ոչ նպատակահարմար է տեսել «ԼՂԻՄ-ում Ադրբեջանի նախագահի լիազոր ներկայացուցչության նստավայրն» Աղդամն ընտրելու Ա. Մութալիբովի որոշումը,

- Էլման Մամեդովը նախապատրաստվել է Ա. Մութալիբովին ինչ-որ բան ասել Պոլյանիչկոյի մասին,

- նա ինչ-որ լուրջ խոսակցություն է ունեցած եղել Ալիֆ Հաջիեւի հետ, որի մասին մտադիր էր տեղեկացնել Ա. Մութալիբովին: Իսկ թե ո՞ւմ նկատի ուներ նա՝ ասելով «մարզում գործող 3+1», միայն ինքը կարող է ասել,

- տվյալ իրավիճակում Էլման Մամեդովն ընդգծել է «գործադիր իշխանության ղեկավարի աշխատակազմի ֆինանսավորման, հաստիքների» եւ «ծառայողական մեքենա» ունենալու խնդիրները:

Պետք է նկատի ունենալ, որ գրառումը կատարվել է այն ժամանակ, երբ կողմերի միջեւ ստորագրվել էր Ժելեզնովոդսկի կոմյունիկեն, որով խնդիր էր դրվում ԼՂԻՄ-ում վերականգնել իշխանության սահմանադրական մարմինները: Ըստ այդմ, Էլման Մամեդովը պետք է գործեր որպես ոչ թե «Խոջալուի գործադիր իշխանության ղեկավար», այլ՝ ԼՂԻՄ Ասկերանի շրջանի Խոջալու գյուղի խորհրդի գործկոմի նախագահ: Դա էր տվյալ պահի նրա սահմանադրական կարգավիճակը: Բայց, ինչպես տեսնում ենք, Էլման Մամեդովն ուներ ընդգծված քաղաքական հավակնություններ: Այն է՝ թերեւս դառնալ «ԼՂԻՄ-ում Ադրբեջանի նախագահի լիազոր ներկայացուցիչ»:

Կայացե՞լ է Մամեդով- Մութալիբով հանդիպումը: Այդ մասին օրագրի հեղինակը ոչինչ չի ասում: Ամենայն հավանականությամբ, հանդիպումը եթե անգամ կայացել էլ է, ապա՝ ապարդյուն: Քանի որ արդեն 26.11.91 թվագրված գրառման մեջ «Խոջալուի գործադիր իշխանության ղեկավարը» խիստ քննադատության է ենթարկում Ա. Մութալիբովին:

Նա, ըստ երեւույթին, ներկա է գտնվել Ադրբեջանի ԳԽ արտահերթ նստաշրջանին, որն ամբողջությամբ նվիրված էր ԼՂ-ին: Դա այն նստաշրջանն է, որն ընդունել է ԼՂ ինքնավար կարգավիճակը լուծարելու հակասահմանադրական որոշում:

Էլման Մամեդովը մեջբերում է նստաշրջանում Ա. Մութալիբովի ելույթից մի հատված, որտեղ վերջինս պատգամավորներին հորդորել է չկայացնել անհավասարակշիռ որոշում եւ նկատել, որ «հայերը դա կօգտագործեն հօգուտ իրենց»:

Խոսքն, ամենայն հավանականությամբ, ԳԽ այն որոշման մասին է, որով կառավարությունը պարտավորվում էր ԼՂ մտցնել Ադրբեջանի ազգային բանակի ստորաբաժանումներ՝ «ապահովելու Ղարաբաղի լեռնային մասի ադրբեջանական բնակչության անվտանգությունը», ինչը գործնականում եւ իրավաբանորեն հավասարազոր էր ԼՂ հայ բնակչության դեմ պատերազմ սանձազերծելուն:

Նախագահ Մութալիբովի «պացիֆիստական» ելույթն, ահա, խթան է հանդիսացել, որ Էլման Մամեդովն օրագրում «արտահայտի ժողովրդի իրական ցանկությունները»:

Ահա. «Ի՞նչ է սպասում Ձեզնից ժողովուրդը,- մտովի դիմելով Ա. Մութալիբովին՝ գրել է նա եւ ինքն էլ պատասխանել.

- Ադրբեջանական հողերը մաքրել հայերից: Ժողովուրդը Ձեզնից ոչ թե բանակցություններ եւ սուտ խոստումներ, այլ կոնկրետ միջոցառումներ է սպասում»:

«Տվեք ինձ հենման կետ, եւ ես կշրջեմ տիեզերքը», ասել է փիլիսոփան:

«Տվեք ինձ լիազորություններ, եւ ես ԼՂ-ն կդատարկեմ հայերից», սա է Էլման Մամեդովի գրառման ենթատեքստը: Այս նպատակադրվածությամբ էր նա 1991թ. նոյեմբերի 11-26-ը գտնվել Բաքվում, հանդիպել բարձրաստիճան պաշտոնյաների եւ Ադրբեջանի «Ազգային պաշտպանության կոմիտեի» ղեկավարներից Ռահիմ Ղազիեւի եւ պաշտպանության նախարար Բարշադլիի հետ:

Չափազանց «համեստ» է այդ օրերի եւս մի գրառումը. «Բարշադլիի հետ պայմանավորվեցինք, որ ՆԳ նախարարությունից զենք ստանանք»: Իսկ արդեն Խոջալուում նա գրել է. «Ժամը 13:00-ին՝ միլիցիայի ջոկատի երդման արարողություն հուշահամալիրում»:

Իսկ այսօր նույն Էլման Մամեդովը խոսում է «անպաշտպան Խոջալուում կազմակերպված ցեղասպանության» մասին: Երեւի մոռացել է անձնական օրագրի մասին: Կամ կարծում է, թե այն թոհուբոհի մեջ անհետ կորել է: Սխալվում է: Օրագիրը կա: Եվ հարկ եղած դեպքում կարող է ներկայացվել՝ որպես ապացույց այն իրողության, որ պատերազմի եւ «ադրբեջանական հողերը հայերից մաքրելուն» նախապատրաստվել է հենց ինքը՝ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Էլման Մամեդովը, որից, անկասկած, երբեւէ ադրբեջանական ժողովուրդը հաշիվ է պահանջելու Խոջալուի համար:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

ԱՆԴՐԱԴԱՐՁ

## Բռավո՛, Բրայզա... Նախիջեւանի օրինակի համար

«Չնայած կողմերից յուրաքանչյուրն իրեն է համարում արդարացի, ամեն դեպքում, ինքնաթիռ ռմբակոծելն անընդունելի է», ըստ ադրբեջանական գործակալությունների փոխանցած հղումների, իր՝ նախկինում նմանատիպ հայտարարությունն այս տեքով կրկին հնչեցրել է Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզան՝ «Իրելի» երիտասարդական հասարակական կազմակերպության գրասենյակում ներկա լրագրողներին:

Բրայզան նշել է, որ Միացյալ Նահանգները կողմ է, որ բոլոր խնդրահարույց հարցերը լուծվեն խաղաղ ճանապարհով: Արձագանքելով հարցին, թե ինչպես կվարվեր ԱՄՆ-ը, եթե լիներ Ադրբեջանի տեղը, Բրայզան այլ կերպ է ընդգծել ասելիքը. «Ներկա դրությամբ Բաքու-Նախիջեւան ավիաչվերթն իրականացվում է Հայաստանի օդային տարածքով, եւ դա համարվում է ընդունելի»:

ԱՄՆ դեսպանն Ադրբեջանում իր գոհունակությունն է հայտնել այն առնչությամբ, որ Ադրբեջանի ղեկավարությունը «այլ դիրքորոշում դրսեւորեց ու փորձում է իր շահերը պաշտպանել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում»:

«**Ազգը**» նախորդ համարում նշել էր, որ Ադրբեջանի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Էլխան Պոլուխովը հայտարարել էր, թե իբր Ադրբեջանը «ուժ չի կիրառել ու չի կիրառի քաղաքացիական օբյեկտների դեմ՝ ի տարբերություն Հայաստանի, որը հայտնի է ահաբեկչությամբ ու պատերազմով քաղաքացիական բնակչության դեմ»:

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության խոսնակը որեւէ կերպ չէր հիշատակել, թե Ադրբեջանը սպառնում է Ստեփանակերտ թռչելիք ինքնաթիռները ռմբակոծել:

Մինչ Բրայզայի հայտարարությունն ու դրանից հետո էլ տարբեր մակարդակներում անդրադարձները ավելի շատ հղում էին անում Միջազգային քաղավիացիայի կազմակերպությանը, թե վերջինս պիտի որոշի Ստեփանակերտ չվերթերի թույլատրելիության խնդիրը: «**Ազգը**» տեղեկացրել է, որ Հայաստանը նամակ էր ստացել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունից՝ ICAO-ից (International Civil Aviation Organization), որով ICAO-ն Երեւանին տեղեկացրել էր Ադրբեջանի անհանգստությունն ու նախազգուշացումները Ստեփանակերտի օդանավակայանի շահագործման վերաբերյալ: Իսկ թե ինչ էր նամակի բովանդակությունը՝ մնում է անհայտ:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**
**2010 թ.**
**(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))**

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը | «ԱՌՆՈ» ՍՊԸ |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Շահ. խաղի կազմակերպում<br>Շխ-038, 066, 096, 136, 151 |
| Լիցենզիա | Շխ-038, Շխ-066, Շխ-096, Շխ-136, Շխ-151 |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | 269.110.00028 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | 02201592 |
| Չափի միավորը | հազար դրամ |
| Գտնվելու վայրը իրավաբանական հասցեն | Ծերեթելի 45/20 |
| Փաստացի գործունեության | Արմավիրի մարզ, գ. Փարաքար-Թաիրով, խանութ, սենյակներ 1; 2; 3; 4; 5<br>Արմավիրի մարզ, գ. Փարաքար-Թաիրով, խանութ, սենյակ 6; 7; 8;<br>Կոտայքի մարզ, գ. Զովեժ 18 փող., թիվ 1, 3 հասցեում գտնվող թ. 3 շինություն<br>Կոտայքի մարզ, գ. Զովեժ 17 փող. թիվ 1 շինություն<br>Արարատի մարզ, գ. Արգավանդ, խանութի մաս, Ծով. Իսակովի 05/1 |

*Ձեւ N 2*

| Ցուցանիշի անվանումը | Տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 308,083 | 320,009 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների ինքնարժեք | 020 | (224,122) | (221,512) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 83,961 | 98,497 |
| Վարչական ծախսեր | 050 | (32,366) | (32,401) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 51,595 | 66,096 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | 11,481 | 2,365 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (9,123) | (2,022) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 53,953 | 66,439 |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | 7919 | (745) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 61,872 | 65,694 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 61,872 | 65,694 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (579) | (439) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 61,293 | 65,255 |

*Ձեւ N 1*

**Հաշվապահական հաշվեկշիռ**
**առ 01.01.2011 թ.**

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 150298 | 166168 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 12500 | 12500 |
| ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 162798 | 178668 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 10270 | 6562 |
| Արագամաշ առարկաներ | 110 | 997 | 1656 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 1089 | 38 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեին | 170 | 36 | 99 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 31 | 194 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 5111 | 13771 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 17534 | 22320 |
| Հաշվեկշիռ | 230 | 180332 | 200988 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 10000 | 10000 |
| Կուտակված շահույթ | 270 | 168043 | 188298 |
| Պահուստային կապիտալ | 280 | 2149 | 2149 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 180192 | 200447 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 40 | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 4 | 1 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 96 | 540 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 140 | 541 |
| Հաշվեկշիռ | 500 | 180332 | 200988 |

*Ղեկավար՝* *Գ. ՌՇՏՈՒՆԻ*

*Գլխավոր հաշվապահ՝* *Վ. ՍԻՄՈՆՅԱՆ*

**«Աուդիտ Սքար» ՍՊԸ**
**Աուդիտորական գործունեության լիցենզիա 015**

*Աուդիտոր/տնօրեն՝* *Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ*

*Աուդիտոր՝* *Դ. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## Orange-ը հյուրընկալեց «Եվրոտեսիլի» մոլդովացի մասնակիցներին



**Երեկ Orange-ը հյուրընկալեց Zdob si Zdub մոլդովական խմբին, որն այս տարի ներկայացնելու է Մոլդովան «Եվրոտեսիլում»: Արդեն երկրորդ տարին լինելով «Եվրոտեսիլի» գլխավոր գործընկերը Հայաստանում եւ չորրորդ տարին՝ Մոլդովայում, Orange-ը միավորում է երկու երկրների երաժշտասերներին այս մեծ համաեվրոպական տոնի շուրջը:**

**«Արդեն երկրորդ տարին է, որ Orange-ը միանում է «Եվրոտեսիլին»: Սա մեծ եվրոպական միջոցառում է, որը թույլ է տալիս միավորվել երաժշտության շուրջը, ճանաչել միմյանց, միասին անցկացնել ոգեւորության պահեր ու պարզապես միասին զվարճանալ: Անցյալ տարվա մեր փորձը ցույց տվեց, որ հայերն իսկապես սիրում են այս իրադարձությունը, եւ մենք ուրախ ենք կրկին այս տարի աջակցել եվրոպական այս տոնի իրականացմանը Հայաստանում: Ուրախ ենք նաեւ այսօր հյուրընկալել մոլդովացի մասնակիցներին, որոնք Orange Մոլդովայի մեր գործընկերների հետ ծանոթանալուց հետո այսօր Orange Արմենիայում են», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:**

**Orange-ն այս տարի նույնպես իր բաժանորդներին ներկայացնելու է բազմաթիվ եվրոտեսիլյան անակնկալներ, որոնք թույլ կտան նրանց այս մեծ տոնի անմիջական մասնակիցը դառնալ:**

## Ցավակցություն

Խոր վշտով Մակարյանների ընտանիքը ցավակցում է Սիրանուշ, Գեղանուշ, Գայանե Վարդանյաններին, սիրելի մայրիկի՝ **Էմմա Վարդանյանի** անժամանակ մահվան կապակցությամբ, եւ բոլոր հարազատներին մաղթում է համբերություն:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 4.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: